ՄԱՄՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄԸ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ. ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 17-ՐԴ ՀՈԴՎԱԾ

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վերաբերյալ փաստաթղթերի հավաքածու

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

ՄԱՄՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԵՎ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄԸ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ. ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 17-ՐԴ ՀՈԴՎԱԾ

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վերաբերյալ փաստաթղթերի հավաքածու

Սույն փաստաթղթի նախնական
ուսումնասիրությունը՝
Մելիսա Մորբեքի
Ընտանեկան բռնության դեմ
կորպորատիվ դաշինք (CAADV),
Միացյալ Թագավորություն

Եվրոպայի խորհուրդ

Ֆրանսերեն հրատարակություն՝

Encourager la participation du secteur privé et des médias à la prévention de la violence à l'égard des femmes et de la violence domestique : Article 17 de la Convention d'Istanbul

Սույն աշխատության մեջ ներկայացված կարծիքները հեղինակինն են, և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպայի խորհրդի պաշտոնական քաղաքականությունը

Սույն փաստաթղթի ամբողջական կամ մասնակի վերարտադրության կամ թարգմանության հետ կապված բոլոր հարցերով դիմել Հաղորդակցության գծով տնօրինություն (F-67075 Ստրասբուրգ Սեդեքս կամ publishing@coe.int)։ Սույն փաստաթղթին առնչվող ցանկացած այլ հարցով դիմել Ժողովրդավարության գլխավոր տնօրինության Հավասարության հարցերով բաժին։

Սույն փաստաթղթում մեջբերված ինտերնետային բոլոր կայքերի հղումների վերջին մուտքը եղել է 2015 թվականի դեկտեմբերի 4-ին։

Կազմը և էջադրումը՝
Փաստաթղթերի և հրապարակումների տպագրության բաժին (SPDP), Եվրոպայի խորհուրդ

Լուսանկարները՝ Շաթերսթոքի

© Եվրոպայի խորհուրդ, 2016 թ. հունվար
Տպագրվել է Եվրոպայի խորհրդում

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

17-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ 7

ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ և ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ և ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ 11

Կանանց նկատմամբ բռնության բացասական ազդեցությունը բիզնես ընկերությունների և դրանց աշխատակիցների վրա 13

Լրատվամիջոցների կողմից կանանց և տղամարդկանց կերպարների պատկերման, գենդերային կարծրատիպերի նրանց վերարտադրման և կանանց նկատմամբ բռնության միջև կապը 16

ԻՆՉՊԵՍ ՆԵՐԳՐԱՎԵԼ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻՆ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ և ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ և ԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԳՈՐԾՈՒՄ 19

Մասնավոր հատվածի ներգրավվումը որպես գործատու 19

Կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ տեղեկատվության տրամադրում և ուսուցում 20

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ և ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ 37

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ և ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԻՋՆ՝ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ և ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ 47

Գենդերային հավասարության և կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ հարցերի շուրջ լրատվական ոլորտի մասնագետների վերապատրաստման խթանում 48

Գենդերային հավասարության և կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ լրատվության ընդլայնմանն ուղղված գործընկերություններ 51

ԱՄՓՈՓՈՒՄ 57

ՍՏՈՒԳԱՑԱՆԿ 59

ՀԻՄՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 65

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 69

Մեջբերված վեբկայքեր՝ 71

Ներածություն

Մասնավոր կազմակերպությունները, լրատվամիջոցները կարևոր դերեն խաղում կանանց նկատմամբ բռնության տարբերձևերի կանխարգելման դրադեմ պայքարի գործում։ Մասնավոր և պետական գործատուներ ունեն իրավական և բարոյական պարտավորություններ, ինչպես նաև տնտեսական շահ՝ սատարելու իրենց աշխատակիցներին՝ պաշտպանելով նրանց առողջությունն ու անվտանգությունը և մեղմացնելով աշխատանքային միջավայրի հետևանքները կամ չունեցողի նարավորը բոլորոի սկերը։ Կանանց նկատմամբ բռնության տարբերձևերը, ինչպես սեռական բռնությունը, հետամտումը և ընտանեկան բռնությունը, ոչ միայն բռնության ենթարկվում են, որոնք դատապարտվում են «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով[1] (ԵՊՇթիվ 210, այսուհետև՝ «Ստամբուլյան կոնվենցիա»), այլև կարողանալու ազդեցություն ունենալ աշխատանքի կատարման, աշխատանքից բացակայությունների և աշխատակազմի ընդհանուր բարեկեցության վրա։ Անկախ նրանից, թե բռնությունը կիրառվել է գործընկերոջ կամ աշխատանքային միջավայրից դուրս մեկ այլ անձի կողմից, այն բացասաբար է անդրադառնում աշխատավայրի վրա։

Սա վերաբերում է և լրատվական կազմակերպություններին, որպես աշխատավայրեր, այնպես էլ լրատվամիջոցներին որպես կարևոր դերատար կարծիքներ և մտածելակերպեր ձևավորելու առումով և հետևաբար լրատվամիջոցները կարող են շատ ավելի մեծ ներդրում ունենալ կանանց նկատմամբ բռնության կանխարգելման գործում՝ հասարակության մեջ ձևավորելով կանանց և տղամարդկանց նկատմամբ վերաբերմունքը և գենդերային հիմքով բռնության ընկալումները։ Լրատվամիջոցներն ունեն սոցիալական փոփոխությունների հասնելու ահռելի ներուժ։ Սակայն սեքսիզմի և արժանապատվությունը նվաստացնող պատկերների առկայությունը, ինչպես նաև լրատվամիջոցների կողմից կանանց

1. Եվրոպայի խորհուրդ (2011), Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, բացատրական զեկույց՝ www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/210։

նկատմամբ բռնության հարցերը լուսաբանելու կամ դիտարկելու ձևը նույնպես կարող են խոչընդոտել փոփոխություններին: Հետևաբար, լրատվական հատվածը կենսական կարևոր գործընկեր է կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի կանխարգելման և դրանց դեմ պայքարի հարցում:

Ճանաչելով մասնավոր հատվածի և լրատվամիջոցների կարևոր դերը՝ Ստամբուլյան կոնվենցիայի 17-րդ հոդվածը մասնակից պետություններից պահանջում է գործի դնել այս ներուժը՝ խրախուսելով մասնավոր հատվածին և, մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործող կազմակերպություններին և լրատվամիջոցներին ձեռնամուխ լինել կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի հարցին և օգնել ձևավորել, մշակել և իրականացնել ներքին և արտաքին քաղաքականություն այս ոլորտում:

Սույն փաստաթղթի նպատակն է բացատրել, թե ինչու է անհրաժեշտ ներգրավել մասնավոր հատվածին և լրատվամիջոցներին կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի գործում և առաջարկել գործնական խորհուրդներ և լավագույն փորձի օրինակներ: Դեպքերի ուսումնասիրությունները և օրինակները վերցված են մի շարք գործատուներից և կազմակերպություններից, որոնք ցույց են տալիս, թե ինչպես կարելի է տարբեր միջամտությունները և պետական մեխանիզմներն օգտագործել կանանց նկատմամբ բռնության հետևանքների վերացման և գենդերային հիմքով բռնության վերաբերյալ իրազեկության բարձրացման նպատակով: Հատուկ ուշադրություն է դարձվում նաև այն միջոցների օրինակներին, որոնք ձեռնարկվում են մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ՝ մեծացնելու երեխաների անվտանգությունը տեղեկատվական և հաղորդակցման, այդ թվում՝ նոր սոցիալական մեդիայի, միջավայրն օգտագործելիս, որը հասանելիություն է տալիս սեռական կամ բռնի բնույթի բովանդակություն պարունակող տեղեկատվությանը, ինչը կարող է վնասակար լինել:

17-րդ հոդվածի գործողության ոլորտը

Մասնավոր հատվածը կարևոր է այն հասարակության վերաբերմունքը փոխելու գենդերային կարծրատիպերը հաղթահարելու և կանանց նկատմամբ բռնությանտարբերձևերի վերաբերյալ իրազեկությունը բարձրացնելու նպատակի իրագործմանհամար։ Փորձելով օգտագործել այդ ներուժը՝ Ստամբուլյան կոնվենցիայի 17-րդ հոդվածը մասնակից պետությունների ցանկանում է ակտիվորեն խրախուսել մասնավոր հատվածի ինքնակազմակերպությունների ինքնակարգավորման միջոցներին ներգրավվել կանանց նկատմամբ բռնության կանխարգելման գործում։

Հոդված 17. Մասնավոր հատվածի և լրատվամիջոցների մասնակցությունը

1. Մասնակից պետությունները պետք է խրախուսեն մասնավոր հատվածին, տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտին և լրատվամիջոցներին, պատշաճ կերպով պահպանելով արտահայտվելու ազատությունն ու նրանց ինքնուրույնությունը, մասնակցել քաղաքականության մշակմանն ու իրականացմանը, ուղեցույցների և ինքնակարգավորման չափանիշների ընդունմանը՝ կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և նրանց արժանապատվության նկատմամբ հարգանքը բարձրացնելու նպատակով։

2. Մասնակից պետությունները, համագործակցելով մասնավոր հատվածի դերակատարների հետ, պետք է զարգացնեն և խթանեն երեխաների, ծնողների կամ ուսուցանողների համապատասխան հմտությունները՝ կապված նրա հետ, թե ինչպես վարվել տեղեկատվական և հաղորդակցման այնպիսի միջավայրի հետ, որը մատչելի է դարձնում սեռական կամ բռնի բնույթի նվաստացուցիչ նյութերը, որոնք կարող են վնասակար լինել։

Ստամբուլյան կոնվենցիայի բացատրական զեկույցում նշվում է, որ 17-րդ հոդվածի նպատակն է խրախուսել մասնավոր ընկերությունների և լրատվամիջոցների առավել լայն մասնակցությունը գենդերային հիմքով բռնությանը վերջ դնելու ջանքերում։

17-րդ հոդվածի առաջին կետը ներառում է երկու տարբեր պարտավորություններ մասնակից պետությունների համար։ Առաջին՝

այն պահանջում է նրանցից խրախուսել մասնավոր հատվածին, տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) ոլորտի կազմակերպություններին և լրատվամիջոցներին մասնակցել կանանց նկատմամբ բռնության կանխարգելման նպատակով տեղական, տարածքային և ազգային քաղաքականության մշակմանն ու իրականացմանը և այս ուղղությամբ ձեռնարկվող քայլերին: Երկրորդ՝ այն պարտավորեցնում է մասնակից պետություններին խրախուսել այս կազմակերպություններին ընդունել ուղեցույցներ և ինքնակարգավորման չափանիշներ՝ կանանց և աղջիկների արժանապատվության նկատմամբ հարգանքն ամրապնդելու և այդկերպ գենդերային հիմքով բռնության կանխարգելմանը նպաստելու նպատակով: Օրինակ՝ մասնավոր ընկերություններին կարելի է խրախուսել մշակել աշխատավայրում բռնության կանխարգելման և բռնության զոհերին աջակցության շուրջ արձանագրություններ կամ ուղեցույցներ:

17-րդ հոդվածի 1-ին կետով նաև հստակ նշվում է, որ մասնակից պետությունները պետք է հարգեն լրատվամիջոցների ազատ արտահայտվելու և անկախության հիմնարար սկզբունքները: Թեև գոյություն ունեցող չափանիշները, ինչպես Գենդերային հավասարության և լրատվամիջոցների վերաբերյալ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2013)1 հանձնարարականը[2], և որոշ անդամ պետությունների իրավական դաշտը ներառում է գենդերային հավասարության և (կամ) կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ դրույթներ մեդիա բովանդակության մեջ[3], Ստամբուլյան կոնվենցիայի 17-րդ հոդվածով լրատվամիջոցների միջոցով կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի առաջադրանքը դրվում է հենց իրենց՝ լրատվամիջոցների վրա: Լրատվական կազմակերպությունները կարող են նպաստել դրան՝ ներդնելով ինքնակարգավորման մեխանիզմներ, ներքին վարքականոններ կամ էթիկայի կանոնագրքեր և ներքին վերահսկողություն՝ խթանելու գենդերային հավասարությունը, պայքարելով գենդերային

2. Գենդերային հավասարության և լրատվամիջոցների վերաբերյալ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2013)1 հանձնարարականի Ա.1 կետ. «Անդամ պետությունները պետք է որդեգրեն համապատասխան իրավական դաշտ, եթե այդպիսին դեռ գոյություն չունի, որի նպատակն է լրատվամիջոցներում մարդկային արժանապատվության սկզբունքի նկատմամբ հարգանքի ապահովումը, ինչպես նաև սեռի հիմքով ցանկացած խտրականության, ատելության հրահրման և գենդերային հիմքով բռնության ցանկացած ձևի արգելումը»:
3. Տե՛ս էջ 34:

կարծրատիպերի դեմ, խուսափելով սեքսիստական բնույթի գովազդներից, ձևակերպումներից և բովանդակությունից և զերծ մնալով բռնության և սեռական հարաբերությունների հետ ասոցացվող՝ կանանց նվաստացնող պատկերների օգտագործումից։

17-րդ հոդվածի երկրորդ կետով մասնակից պետություններից պահանջվում է համագործակցել մասնավոր հատվածի հետ՝ զարգացնելու և խթանելու երեխաների, ծնողների կամ ուսուցանողների համապատասխան հմտությունները կապված նրա հետ, թե ինչպես վարվել տեղեկատվական կամ հաղորդակցման այնպիսի միջավայրի հետ, որը մատչելի է դարձնում սեռական կամ բռնի բնույթի նվաստացուցիչ նյութերը։ Թեև կասկած չկա, որ ինտերնետը նորարարական և գլոբալ ռեսուրս է, որը ծառայում է իր բազմաթիվ օգտատերերի շահերին, այն միշտ չէ, որ հանդիսանում է ապահով, անվտանգ, բաց և նպաստավոր միջավայր բոլորի համար առանց որևէ խտրականության։ Ինտերնետի կառավարման շատ ասպեկտներ դեռևս բավականին չկարգավորվող են, ինչն անսպառ հնարավորություններ է տրամադրում կանանց և աղջիկների մասին նվաստացուցիչ ուղերձների, գերսեքսուալացված պատկերների հասանելիության, արտադրության և տարածման, կանանց նկատմամբ բռնության հրահրման կամ բնականոնացման, ինչպեսև սեքսիստական բնույթի ատելության խոսքի ավելի մեծ տարածման համար։ Ինտերնետի միջոցով տարածվող այդօրինակ ուղերձները և պատկերները կարող են բացասական ազդեցություն ունենալ՝ երեխաների մոտ սոցիալացնելով վնասակար կարծրատիպեր և կանանց նկատմամբ բռնության ընդունում։ Հետզհետե ավելի շատ վկայություններ են ի հայտ գալիս՝ կապված նոր տեխնոլոգիաների և սոցցանցերի չարաշահման հետ խոցելի երիտասարդներին, ներառյալ՝ աղջիկներին շահագործելու և թիրախավորելու վերաբերյալ՝ բուլինգի, հետամտման, ոտնձգության և սպառնացող վարքագծի ձևերով։ Ուստի շատ կարևոր են տեղեկատվական և հաղորդակցման միջավայրերում վնասակար նյութերի և գործելակերպերի մասին հանրային իրազեկության բարձրացումը և երեխաների, ծնողների և ուսուցանողների համար ինտերնետի ապահով օգտագործման վերաբերյալ կրթական ծրագրերը։ Այդպիսի ծրագրերի նպատակը կլինի զարգացնել երեխաների, ծնողների և ուսուցանողների հմտությունները՝ պաշտպանելու երեխաների անվտանգությունը նոր տեխնոլոգիաների, բջջային հեռախոսների, պլանշետների և սոցցանցերի օգտագործման ժամանակ։

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ոլորտում մասնավոր հատվածի և լրատվամիջոցների ներգրավման հիմնավորումը

Ստամբուլյան կոնվենցիայի նպատակն է հասնել կանանց նկատմամբ բռնության հանդեպ զրոհանդուրժողականության: Այն պահանջում է մասնակից պետություններից քրեականացնել կամ այլ պատիժ սահմանել բռնության հետևյալ ձևերի համար՝ սեռական ոտնձգություններ, հետամտում, հարկադիր ամուսնություն, կանանց սեռական օրգանների խեղում, հղիության հարկադիր արհեստական ընդհատում, հարկադիր ավարտում և ընտանեկան բռնության բազմաթիվ ձևերի համար (ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնություն)[4]: Դա հստակ ուղերձ է, որ կանանց նկատմամբ բռնությունն իր բազմաթիվ ձևերով մասնավոր հարց չէ: Քանի որ բազմաթիվ կանայք, որոնք ենթարկվում են բռնության նշված տեսակներին, շարունակում են լուռ տառապել, բռնության ենթարկված ներին մեղադրելու և ամոթանքտալու տարածված մշակույթի պատճառով բռնությունը հաճախ չի բացահայտվում[5]:

4. Եվրոպայի խորհուրդ, Ստամբուլյան կոնվենցիայի վերաբերյալ տեղեկատվական թերթիկ:
5. Եվրոպական միության Հիմնարար իրավունքների գործակալությունը (2014 թ.) պարզել է, որ Եվրոպական միությունում զուգընկերոջ կամ ոչ զուգընկերոջ կողմից սեռական բռնության ենթարկված կին զոհերի մոտ մեկ քառորդը ձեռնպահ է մնացել հաղորդում ներկայացնելուց, քանի որ ամաչել է պատահածից: Ֆիզիկական կամ սեռական բռնությունից տուժած կանանց մինչև 40%-ը որևէ մեկին չի դիմել, այդ թվում՝ ընկերներին կամ ընտանիքին:

Այդուհանդերձ, բռնություն տեղի է ունենում ամենուր, դրա հետևանքները զգացվում են բոլոր ոլորտներում, այդ թվում նաև մասնավոր հատվածում։

Եվրոպական մի շարք երկրներում գործատուները կրում են աշխատավայրում սեռական ոտնձգությունների կանխարգելման իրավական պատասխանատվություն[6], և հնարավոր դատական գործերը կարող են ֆինանսական լուրջ ազդեցություն ունենալ ընկերությունների վրա։ Կանանց նկատմամբ բռնությունը աշխատավայրի և ընկերությունների բիզնեսի վրա բացասաբար է ազդում նաև այլ տեսանկյունից։ Երբ աշխատավայրում տեղի է ունենում բռնություն, ինչպես օրինակ՝ սեռական ոտնձգություն, այն քայքայում է աշխատանքային առողջ միջավայրի հիմքում ընկած վստահության մթնոլորտը և համագործակցությունը՝ հանգեցնելով տնտեսական արտադրողականության նվազեցման։ Աշխատանքից դուրս բռնությունը, մասնավորապես՝ ընտանեկան բռնությունը, անդրադառնում է աշխատավայրում՝ տուժած աշխատակիցների վրա բռնության հետևանքների միջոցով։

Կա նաև համապատասխան կապ լրատվամիջոցների և բռնության կանխարգելման միջև, քանի որ կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ ոչ պատշաճ լրատվությունը՝ առանց համատեքստի ներկայացման և նախապատվություն տալով սենսացիոն ձևակերպումներին, կարող է ամրապնդել գենդերային կարծրատիպերը, որոնք արմատավորում են գենդերային հիմքով բռնությունը։ Այս համատեքստում Եվրոպայի խորհրդի ոչ պարտադիր չափանիշները[7] և մի շարք եվրոպական երկրներում ներպետական իրավական շրջանակները[8] լրացնում են Ստամբուլյան կոնվենցիայի

6. Օրինակ՝ Աշխատանքի և զբաղվածության հետ կապված հարցերում հավասար հնարավորությունների և տղամարդկանց ու կանանց նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքի կիրառման մասին (վերամշակված) ԵՄ 2006/54/EC հրահանգի 26-րդ հոդվածով նշվում է, որ «Անդամ պետությունները պետք է, ներպետական իրավունքի, կոլեկտիվ համաձայնագրերի կամ գործելակերպի համաձայն, խրախուսեն գործատուներին և մասնագիտական վերապատրաստման մատչելիության համար պատասխանատու անձանց՝ ձեռնարկելու արդյունավետ միջոցներ սեռի հիմքով խտրականության բոլոր ձևերը, մասնավորապես՝ աշխատավայրում ոտնձգությունը և սեռական ոտնձգությունն ու աշխատանքի, մասնագիտական վերապատրաստման և առաջխաղացման հարցերում խտրականության բոլոր ձևերը կանխելու նպատակով»։
7. Գենդերային հավասարության և լրատվամիջոցների վերաբերյալ անդամ պետություններին Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2013)1 հանձնարարական։
8. Ներպետական իրավական շրջանակների օրինակներ բերված են XX-րդ էջից սկիզբ առնող գլխում։

17-րդ հոդվածը՝ մեդիա բովանդակությունում կանանց նկատմամբ բռնության հրահրումը և (կամ) սեքսիստական բնույթի ատելության խոսքի սերմանումը կանխարգելելու վերաբերյալ առավել մանրամասն դրույթներով:

Ստամբուլյան կոնվենցիայի մասնակից պետությունները պատասխանատու են ապահովել, որ ներպետական օրենսդրությունը, ինստիտուցիոնալ շրջանակները և քաղաքականությունը համապարփակ կերպով պայքարեն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ: Իրենց ամբողջական հակազդման շրջանակում կառավարությունները նաև պետք է խրախուսեն մասնավոր հատվածին և լրատվամիջոցներին՝ գիտակցել իրենց կարևորությունը որպես համատեքստային միջավայր, որտեղ կարելի է անդրադառնալ գենդերային հիմքով բռնության կանխարգելմանը: Դա կարող է արվել՝ ի ցույց դնելով, որ մասնավոր հատվածի և լրատվամիջոցների դերակատարները ոչ միայն կրում են բռնության կանխարգելմանը նպաստելու սոցիալական շահ և բարոյական պատասխանատվություն, այլև կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարում ներգրավվելու դեպքում ունեն տնտեսական և սոցիալական արտոնություններ:

Կանանց նկատմամբ բռնության բացասական ազդեցությունը բիզնես ընկերությունների և դրանց աշխատակիցների վրա

Նախ՝ գործատուները կարող են տեղեկացվել աշխատավայրերում կանանց նկատմամբ բռնության ազդեցության ծավալների մասին: Օրինակ՝ Եվրոպական միությունում կանանց 45-ից 55 տոկոսի հաղորդմամբ՝ իրենք ենթարկվել են աշխատավայրում սեռական ոտնձգության որևէ ձևի (Հիմնարար իրավունքների գործակալություն, 2014 թ.): Ըստ գնահատականների՝ Միացյալ Թագավորությունում աշխատող կանանց տարեկան ավելի քան 20 տոկոսն արձակուրդ է վերցնում ընտանեկան բռնության պատճառով: Որպես այդ չարաշահման անմիջական արդյունք՝ նշված կանանց 2 տոկոսը նույնիսկ կորցնում է աշխատանքը (Walby S. et al. 2004, էջ 38):

Երկրորդ՝ ժամանակի ընթացքում առավել ամրապնդվում է այն գաղափարը, որ ընտանեկան բռնությունն ազդում է աշխատակցի կողմից մասնագիտական պարտականությունները կատարելու կարողության վրա: Աշխատակիցներն աշխատանքի գնալիս իրենց

խնդիրները տանը չեն թողնում, այլ բերում են դրանք իրենց հետ աշխատավայր: Լավ առողջությունը և բարեկեցությունը կարևոր գործոններ են, որոնք հնարավորություն են տալիս մարդկանց մուտք գործել աշխատանքի շուկա և մնալ այնտեղ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աշխատողների բարեկեցությունը կարևոր նշանակություն ունի նաև բիզնեսի արտադրողականության և տնտեսական աճի համար (McKee M. et al. 2012; Marmot M. 2010): Առողջ հոգեսոցիալական աշխատանքային միջավայրը խորհրդակցական, աջակցող և ճկուն լինելու առումով կարող է օգնել աշխատակիցներին լինել ավելի մոտիվացված, եկամտաբեր և ամենակարևորը՝ ավելի արդյունավետ կազմակերպություն ունենալու համար նպաստավոր: Անձնակազմի բարեկեցությունը նպաստում է արտադրողականության բարձրացմանը և աշխատուժի մասնակցության աճին՝ միաժամանակ նվազեցնելով առողջապահական հետագա կարիքները (HAPI 2012):

Բացի այդ, բռնությունը ոչ միայն բացասաբար է ազդում տվյալ անհատի վրա, այլև նշանակալի հետևանքներ է ունենում աշխատանքային գործընկերների համար, որոնք կարող են ներգրավվել՝ օգնելու համար կամ ականատես լինել բռնի գործողության, որը գործադրվել է գործընկերոջ, հաճախորդի կամ անծանոթի կողմից: Բռնության ենթարկված աշխատակիցները տուժում են, սակայն դա կարող է ուղղակի կամ անուղղակի կերպով անդրադառնալ նաև գործընկերների վրա:

Կազմակերպչական մակարդակում օգնություն ցուցաբերելու անկարողությունը կարող է հանգեցնել հիասթափության կազմակերպության ներսում (Pattison G. 2006): Բռնությունը կարող է ազդել աշխատանքային միջավայրի սոցիալական համախմբվածության և աշխատանքի կազմակերպման եղանակի վրա (Johnson P.R. and Gardner S. (2000), էջ 197-203): Այն բացասաբար է անդրադառնում աշխատակիցների մոտիվացիայի և նվիրվածության, ձեռնարկության նկատմամբ հավատարմության, աշխատանքային մթնոլորտի, հանրային կերպարի և նույնիսկ նորարարության ու գիտելիքների զարգացման հանդեպ բաց լինելու վրա: Բացի այդ, բռնությունն աշխատավայրում կարող է ներառել գույքի ոչնչացում, իսկ ոտնձգության և բռնության վերաբերյալ դատական գործերը կարող են բացասաբար ազդել ընկերության բյուջեի վրա: Գործերը տանուլ տալու կամ համաձայնեցված լուծումների դեպքերում կարող են առաջանալ խոշոր ֆինանսական հետևանքներ:

Երրորդ՝ կանանց և աղջիկների նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության սոցիալական և տնտեսական ծախսերը մեծ են ոչ միայն զոհերի, այլև հասարակության և մասնավոր հատվածի համար՝ տնտեսական ծախսերի և աշխատանքից բացակայության պատճառով տնտեսական արտադրանքի կորստի ձևով: Անդամ պետություններում ընտանեկան բռնության հետ կապված ծախսերի ճշգրիտ և համակարգված տվյալներ ստանալը դժվար է սահմանումների, տվյալների հավաքագրման մեթոդաբանության և արդյունքների հրապարակման միջև հսկայական տարբերությունների պատճառով: Այդուհանդերձ, որոշ ջանքեր են գործադրվել Եվրոպայում կանանց նկատմամբ բռնության հետ կապված ծախսերը գնահատելու ուղղությամբ: Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտի (ԳՀԵԻ) գնահատմամբ՝ գենդերային հիմքով բռնության հետ կապված ծախսերը ԵՄ անդամ պետություններում գերազանցում է տարեկան 200 միլիարդ եվրոն (Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտ, 2014 թ.): Դա ներառում է տնտեսական արտադրանքի կորուստը, ծառայությունների մատուցումը, այդ թվում՝ առողջապահական, իրավաբանական, սոցիալական և մասնագիտացված աջակցությունը, տուժողի վրա անհատական (ֆիզիկական և հուզական) ազդեցությունը: Հետազոտություններից մեկի տվյալներով՝ միայն ՄԹ-ում ընտանեկան բռնության հետ կապված տարեկան ընդհանուր ծախսը պետության, գործատուների և տուժողների համար կազմում է շուրջ 16 միլիարդ ֆունտ (Walby S. 2009): Գործատուների համար տնտեսական արտադրանքի և այլ կորուստները կազմում են տարեկան շուրջ 1,8 միլիարդ ֆունտ (Coy M. and Kelly 2011): Դա ներառում է հիվանդությունների, բացակայությունների, արտադրողականության կորստի, աշխատանքից վաղաժամ գնալու, աշխատանքի ուշ գալու, աշխատուժի հոսունության և առողջության վատթարացման հետ կապված ծախսերը: Հաշվարկված է, որ առողջական խնդիրների պատճառով բացակայության ծախսերի գրեթե կեսն ընկնում է գործատուի վրա, իսկ մյուս մասը անհատի վրա՝ աշխատավարձ չստանալու պատճառով:

Ուստի խիստ կարևոր է, որպեսզի կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը դիտարկվեն որպես լուրջ, ճանաչելի և կանխարգելման ենթակա երևույթ նաև մասնավոր հատվածի կողմից: Այդ նպատակով մասնակից պետությունները կարող են ձեռնարկել մի շարք միջոցներ՝ գործատուներին շահագրգռելու հետաքրքրություն ցուցաբերել իրենց աշխատակիցների առողջության, ապահովության և

բարեկեցության ամրապնդման և պաշտպանության հարցում՝ որպես իրենց բիզնեսի և կառավարման չափանիշների, քաղաքականության և ռազմավարության մաս: Այդպիսի միջոցների օրինակներ բերված են հաջորդ բաժնում և սույն փաստաթղթի վերջում զետեղված ստուգացանկում:

Լրատվամիջոցների կողմից կանանց և տղամարդկանց կերպարների պատկերման, գենդերային կարծրատիպերի նրանց վերարտադրման և կանանց նկատմամբ բռնության միջև կապը

Լրատվամիջոցները պարզապես հասարակության հայելին կամ չեզոք հաղորդակցական միջավայր չեն[9]: Իրենց լուսաբանումների և ներկայացման միջոցով լրատվամիջոցները ստեղծում են իմաստներ և թեմաներ և ակտիվորեն ձևավորում կարծիքներ, վերաբերմունք, ընկալումներ և գաղափարներ: Իրականում տեխնոլոգիական առաջընթացի պայմաններում լրատվամիջոցներն այսօր ավելի մեծ դեր են խաղում անհատների համայնացման գործում, քան երբևէ: Լրատվամիջոցները մարդկանց առօրյա կյանքի անբաժանելի և կայուն մասն են:

Լրատվամիջոցները կարող են ամրապնդել status quo-ն՝ արմատավորելով գենդերային կարծրատիպերը և կանանց նկատմամբ բռնությունն արդարացնող մոտեցումները: Սեքսիզմը, բռնության պարզունակացումը կամ կանանց գերսեռականացումը, որոնց կարելի է հանդիպել լրատվամիջոցներում, այդ թվում նաև սոցիալական մեդիայում և գովազդներում, կարող են նույնիսկ սաստկացնել կանանց նկատմամբ բռնությունը: Գենդերային կարծրատիպացումը և կանանց նկատմամբ բռնությունը, ըստ էության, փոխկապակցված են: Կանանց անլիարժեքության մասին գաղափարները, տղամարդկանց իրավունքների կամ կնոջ և տղամարդու սեռականության վերաբերյալ կանխակալ պատկերացումներն էապես ազդում են վարքագծի վրա և արդարացնում կանանց նկատմամբ բռնության կիրառումը տղամարդկանց կողմից՝ որպես վերահսկողության ձև: Բացի այդ, լրատվամիջոցները առանցքային դեր են խաղում կանանց և տղամարդկանց կերպարների ստեղծման և տարածման գործում, որոնք մեծապես ազդում են երկու սեռերի և գենդերային դերերի հանրային ընկալման վրա:

9. Եվրոպայի խորհուրդ (2013 թ.) «Լրատվամիջոցները և կանանց կերպարը»:

Լրատվամիջոցները հավասարապես կարող են նպաստել սոցիալական փոփոխություններին՝ խթանելով կանանց նկատմամբ բռնության հանդեպ բացարձակ անհանդուրժողականություն: Նրանք կարող են ներկայացնել կանանց և տղամարդկանց մասին հավասարակշռված պատկերացում և նպաստել իրազեկության բարձրացմանը կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ, ինչպես նաև այն ուղիների, որոնցով հասարակության տարբեր հատվածները կարող են գործել՝ բռնության կանխարգելման և բռնության զոհերին աջակցության տրամադրման նպատակով: Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման գործում լրատվամիջոցների ներգրավվման օրինակներ բերված են սույն աշխատության «Լրատվամիջոցները և կանանց նկատմամբ բռնության կանխարգելումը» գլխում (էջ xx):

Ինչպես ներգրավել մասնավոր հատվածին կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի գործում

Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման գործում մասնավոր հատվածի ներգրավվմանը սատարելու համար միջոցներ մշակելիս կարևոր է հաշվի առնել այն տարբեր դերերը, որ կարող է ունենալ մասնավոր հատվածը՝ որպես գործատու, բայց հավասարապես նաև որպես վերաբերմունք և ընկալումներ ձևավորող, ապրանքներ և ծառայություններ գովազդող կամ արտադրող և որպես ավելի լայն համայնքի անդամ: Բոլոր այս դերերում կարելի է քայլեր ձեռնարկել կանանց նկատմամբ բռնության կանխարգելման կամ կանանց նկատմամբ բռնության արմատավորման ուղղությամբ: Այս բաժնում ներկայացվում է, թե ինչպես կարող է մասնավոր հատվածն ազդեցություն ունենալ կանանց նկատմամբ բռնության վրա, և հակառակը՝ ինչպես է կանանց նկատմամբ բռնությունն ազդում մասնավոր հատվածի վրա: Քննարկվում են հիշարք գործնական լուծումներ, թե ինչ կարող են անել բիզնես ձեռնարկությունները իրավիճակը բարելավելու համար, ներկայացվում են լավ փորձի օրինակներ:

Մասնավոր հատվածի ներգրավվումը որպես գործատու

Եվրոպական երկրների մեծ մասում ներպետական իրավական դաշտը պարունակում է գործատուների դերի վերաբերյալ դրույթներ կապված աշխատավայրում սեռական ոտնձգությունների կանխարգելման և

վերացման հետ[10]: Դրանք ներառում են հատուկ ընթացակարգերի և կադրերի բաժիններում կոնտակտային անձանց նշանակում և հաճախ իրականացվում են արհմիությունների աշխատանքի արդյունքում: Սակայն, ինչպես առաջարկվում է Ստամբուլյան կոնվենցիայով, կան լրացուցիչ ուղիներ, որոնցով մասնավոր հատվածը կարող է միջամտել և դեր կատարել կանանց նկատմամբ բռնության, ներառյալ՝ աշխատավայրից դուրս տեղի ունեցող բռնության կանխարգելման գործում:

Կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ տեղեկատվության տրամադրում և ուսուցում

Գործատուների համար, որոնք ցանկություն ունեն մասնակցել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման գործին, առաջին քայլը կարող է լինել իրենց աշխատակիցների շրջանում այս հարցի շուրջ իրազեկության բարձրացումը: Քանի որ գենդերային հիմքով բռնությունը դյուրությամբ դիտարկվում է որպես արգելված թեմա, աշխատակիցների համար կարող է դժվար լինել բռնության մասին խոսելը և հաճախ կարող են չիմանալ, թե ինչպես խոսել այդ մասին: Ուստի գործատուները հնարավորություն ունեն իրենց աշխատակիցներին «թույլտվություն», ինչպես նաև տեղեկատվություն տրամադրել՝ աշխատավայրում բռնության մասին խոսելու համար: Հետևաբար, աշխատակազմի ուսուցանումը կարող է ներառել ուսուցողական դասընթացներ աշխատավայրում և համայնքում գենդերային հիմքով բռնության մասին զրուցելու մասին: Ուսուցումը կարող է նաև ներառել անհանգստության նշանների մեկնաբանություն, ինչպեսև քննարկումներ այն մասին, թե ինչ անել և ինչ չանել, եթե պատճառ կա ենթադրելու, որ գործընկերը տանը կամ աշխատավայրում ենթարկվում է բռնության: Կազմակերպությունում կանխարգելման պատճառը ներկայացնելու համար բարձր մակարդակի դեսպաններ նշանակելը նույնպես ընդգծում է, որ կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարը կարևոր է և պետք է մտահոգի բոլորին:

---

10. Տե՛ս ԵՄ 2006/54/EC հրահանգի 26-րդ հոդվածի վերաբերյալ 5-րդ ծանոթագրություն, op. cit. Բացի այդ, Սեռական ոտնձգություններն աշխատավայրում, ազգային և միջազգային արձագանքների մասին ԱՄԿ զեկույցի համաձայն՝ «Իրավակարգերի մեծ մասում սեռական ոտնձգությունների մասին օրենքները պարտականություններ են դնում գործատուների վրա: Որոշներում պարտականություն է դրվում արձագանքել ոտնձգությունների դեպքերին», տե՛ս Գրականություն:

Միացյալ Թագավորությունում «KPMG» ընկերությունն աշխատել է ընտանեկան բռնության վերաբերյալ իր աշխատակազմի իրազեկությունը բարձրացնելու ուղղությամբ: Նպատակը եղել է խթանել մասնագիտական այնպիսի միջավայր, որտեղ բռնության ենթարկվող աշխատակիցները կարող են բարձրաձայնել դրա մասին: Ընկերության պաշտոնական դիրքորոշումը հրապարակելու համար նրա ներքին աջակցության քաղաքականությունը տեղադրվել է ընկերության ներքին ցանցում (ինտրանետում): Ինտրանետը նաև տեղեկություններ է տրամադրում մատչելի աջակցության և դրան դիմելու ընթացակարգի մասին: Բացի այդ, գծային մենեջերները վերապատրաստում են անցնում զարգացնելու իրենց հմտությունները բռնարարների և ընտանեկան բռնությունից տուժածներիհետ համապատասխանաբար վարվելու համար: Բիզնեսի արտադրողականության և ընտանեկան բռնության միջև կապը ստեղծվում է կազմակերպությունում աջակցությունը և կանխարգելումը կատարողականի կառավարման հետ կապելու միջոցով:

Գենդերային հիմքով բռնության վերաբերյալ ուսուցանումը աշխատակիցների շրջանում ձևավորում է ընկալում այն մասին, թե ինչու բռնության կանխարգելումը և բռնության զոհերին աջակցությունը կարող են կարևոր նշանակություն ունենալ ընկերությունում: Եթե աշխատակիցներն ավելի լավ են հասկանում խնդիրը, նրանք ավելի պատրաստակամ են օգնել և նպաստել ընկերության ներքին քաղաքականությանը: Բռնության ենթարկվելու ռիսկի ենթակա աշխատակիցների համար ընկերության ներքին աջակցության համակարգերը կարող են փոխել իրավիճակը, և պարտադիր չէ, որ դրանք թանկարժեք լինեն, այլ կարող են օգտագործել ընկերության արդեն իսկ առկա ռեսուրսները: Կարևոր է ստեղծել աշխատակիցների և կազմակերպության միջև վստահության հիմք: Վստահելի մենեջերները և գործընկերները կարող են օգնել այս գործում, քանի որ բռնության ենթարկվող աշխատակիցները կարող են իրենց իրավիճակի մասին առաջին հերթին պատմել ծանոթի, այլ ոչ թե լիովին անծանոթի կամ իրավապահի: Ուստի ուսուցանումը կարող է նաև ներառել աշխատակիցներին նախապատրաստելը իրենց կազմակերպությունում «հոգեբանական առաջին օգնություն» ցուցաբերել բռնության զոհերին:

Բացի այդ, գործատուները կարող են նվազեցնել ընտանեկան բռնության հետ կապված տնտեսական և գործարար ծախսերը

աշխատավայրում՝ ակտիվ դեր ստանձնելով բռնության կանխարգելման գործում: Կանանց նկատմամբ բռնությունը պետք է դիտարկվի որպես աշխատավայրի անվտանգության խնդիր: Կազմակերպությունը կարող է տեղեկացնել աշխատակազմին հասանելի թեժ գծերի և ծառայությունների մասին: Օրինակ՝ «HC Energía» իսպանական ընկերությունում դա արվում է ընկերության ինտրանետում սեռական ոտնձգությունների և հետամտման, ինչպես նաև Իսպանական 3/2007 ակտի (Եվրոպական հանձնաժողով (2012 թ.), էջ 258-259) դրույթների համաձայն՝ այդ երևույթների վերաբերյալ հաղորդումներ ներկայացնելու տարբեր եղանակների մասին տեղեկություններ տրամադրելու միջոցով: Ընկերության ինտրանետում մատչելի է նաև գենդերային հիմքով բռնության զոհերին խորհրդատվություն և մասնագիտական աջակցություն տրամադրելու մասին տեղեկատվություն:

Ընտանեկան բռնության վերաբերյալ տեղեկությունների տրամադրում. «Milbank, Tweed, Hadley & McCloy» ՍՊԸ և «Wragge & Co.» ՍՊԸ (Միացյալ Թագավորություն/միջազգային)

Միջամտություն՝ Ընտանեկան բռնության դեմ կորպորատիվ դաշինքի անդամներ դառնալուց հետո այս երկու միջազգային իրավաբանական ընկերությունները ներգրավվել են աշխատավայրում ընտանեկան բռնության դեմ պայքարի մի շարք նախաձեռնություններում: Աշխատավայրում ընտանեկան բռնության վերաբերյալ իրազեկության բարձրացման նպատակով ընկերությունների զուգարաններում պաստառներ են փակցրել: Դա աշխատակիցներին հնարավորություն է ընձեռում տեղեկատվությունը կարդալ ապահով, գաղտնի միջավայրում, ինչը թույլ է տալիս բռնության հնարավոր զոհերին հասկանալ, որ այն, ինչ տեղի է ունենում իրենց հետ, անընդունելի է, և որ տվյալ դեպքերի համար առկա է օգնության հնարավորություն: Պաստառների վրա կան հեռացվող թերթիկներ՝ 24-ժամյա թեժ գծի անվճար հեռախոսահամարով, որը աշխատակիցները կարող են աննկատ վերցնել իրենց հետ: Ընկերությունների ինտրանետային կայքերում զետեղված են վեբկայքերի հղումներ, որոնք բռնության զոհերին տրամադրում են լրացուցիչ գործնական օգնություն և աջակցություն: Ինտրանետի նյութերում նշված է նաև, թե ինչ անել, եթե աշխատակիցը կարծում է, որ ինքը կամ իր ծանոթներից որևէ մեկը գուցե բռնություն է գործադրել: Ընկերությունների կադրերի բաժնի աշխատակիցները և գլխավոր մենեջերները վերապատրաստում են

անցել՝ ինչպես բացահայտել այն նշանները, որոնք ցույց են տալիս, որ ինչ-որ մեկը կարող է ընտանեկան բռնության զոհ լինել, ինչ անել և ինչ չանել այդ դեպքում: Ընդունարանի և անվտանգության աշխատակիցները նույնպես վերապատրաստում են անցել՝ ինչպես վարվել բռնություն գործադրողների հետ, որոնք փորձում են կապ հաստատել զոհերի հետ աշխատավայրում: Աշխատակիցներին հետամտելու դեպքում նրանց կարող են ուղեկցել դեպի իրենց մեքենաները, տաքսին, ավտոբուսը կամ գնացքը:

Արդյունքներ՝ ընտանեկան բռնության վերաբերյալ աշխատավայրում իրազեկության բարձրացման արդյունքում մարդիկ ավելի շատ են հակված քննարկել այդ խնդիրը: Քանի որ մենեջերները վերապատրաստում են անցել, թե ինչպես անդրադառնալ այդ խնդրին, ընկերություններում գենդերային հիմքով բռնությունների վերաբերյալ հաղորդումների թիվը ավելացել է: Զուգարաններում փակցված պաստառները, կարծես, հատկապես արդյունավետ են եղել: Ինտրանետում ընտանեկան բռնության վերաբերյալ էջեր այցելում են ամսական 20-ից 25 աշխատակիցներ, որոնք էջում մնում են միջինից ավելի երկար ժամանակ, ինչը ցույց է տալիս, որ նրանք կարդում են այնտեղ զետեղված տեղեկատվությունը: Նույնիսկ ընտանեկան բռնության որոշ դեպքերի մասին հաղորդումներ են ներկայացվել կադրերի բաժին:

Մերտած դասեր՝ ուսուցանումը և տեղեկատվությունը կարևոր գործիքներ են՝ օգնելու աշխատակիցներին հասկանալ, թե իրականում որքան տարածված է ընտանեկան բռնության խնդիրը հասարակությունում և նույնիսկ ընկերության ներսում: Ղեկավարության կատարած ուսումնասիրությունը և ստացված տվյալներն օգտակար են եղել աշխատակիցների շրջանում այդ հարցի շուրջ իրազեկության բարձրացման համար: Կարևոր է նպաստել այն ընկալմանը, որ ընտանեկան բռնությունը խիստ տարածված, սակայն քողարկված խնդիր է:

Ինչպես է գործում բռնության կանխարգելման այս մոտեցումը՝ իրազեկության բարձրացման և ընտանեկան բռնության հաղթահարմանն ուղղված միջոցների ձեռնարկման շնորհիվ խնդիրը տեսանելի է դարձել ընկերությունում: Խնդրի տեսանելիության մեծացումը ստեղծում է ապահովության և վստահության միջավայր, որտեղ աշխատակիցները կարող են մտորել իրենց անձնական կամ իրենց շրջապատում այլոց

իրավիճակը: Նրանք իրազեկվում են իրենց իրավունքների և ընտանեկան բռնության կառուցվածքային բնույթի վերաբերյալ՝ որպես սոցիալական խնդրի, որն իրենց անձնական իրավիճակից դուրս է: Օգնության և աջակցության համար դիմելու վերաբերյալ տեղեկությունները մատչելի են ինչպես ընտանեկան բռնության զոհերի, այնպես էլ բռնություն գործադրողների համար:

Բռնության կանխարգելումը և բռնության զոհերին աջակցության տրամադրումը կազմակերպությունում նույնպես կարող է ներառվել աշխատակիցների նպաստների համակարգում: Աշխատակիցների առողջությանը և բարեկեցությանը կարելի է հետևել առցանց հարցումների և բուժզննումների միջոցով: Գենդերային հիմքով բռնության զոհերին կարող է տրամադրվել հոգեբանական, բժշկական, իրավաբանական և տնտեսական աջակցություն, ինչպես «Red Eléctrica de España» ընկերության դեպքում: Այս իսպանական ընկերությունը ծածկում է իր աշխատակիցների՝ գենդերային հիմքով բռնությունից տուժելու արդյունքում կրած ծախսերը՝ ամսական մինչև 600 եվրո չափով մինչև վեց ամիս ժամկետով: Հարկ է նշել, որ ներքին աջակցության ծրագրերը կարող են ուղղված լինել ոչ միայն բռնության զոհերին և բռնություն վերապրած անձանց, այլև բռնություն գործադրողներին, որոնք նույնպես կարող են ներկա լինել կազմակերպությունում:

Կանանց նկատմամբ բռնության հարցերում մասնավոր հատվածի ներգրավման խթաններ և գործընկերություններ

Չնայած առկա նախաձեռնություններին և լավագույն փորձին՝ մասնավոր հատվածը հաճախ դառնում է պակասող օղակ, երբ խոսքը գնում է կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի մասին: Քանի որ ֆինանսական աջակցություն ոչ միշտ է առկա, բռնության կանխարգելման գործում մասնավոր հատվածին ներգրավելու համար անհրաժեշտ են պետական քաղաքական աջակցություն և առաջնորդություն, ինչպես նաև խթաններ, ինչպես նախատեսված է Ստամբուլյան կոնվենցիայով:

Ընկերությունների կողմից դիմադրության արդյունքում, որը բխում է այն համոզմունքից, որ իրենց կազմակերպություններում բռնություն տեղի չի ունենում, անհրաժեշտություն է ծագում օգնել մասնավոր հատվածի դերակատարներին հասկանալ, թե ինչու նրանք պետք է ներգրավվեն գենդերային հիմքով բռնության դեմ պայքարում, ինչպես

նաև ինչպես համակարգել և ներառել այդ հարցը իրենց կադրային քաղաքականության մեջ: Ուստի մասնավոր հատվածին կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ թիրախային տեղեկությունների, բռնության դեպքերի հաճախականության և բռնության հետ կապված ծախսերի մասին տվյալների տրամադրումը, աշխատավայրում մարդկանց վրա գենդերային հիմքով բռնության ազդեցության ներկայացումը, բիզնեսի, արտադրողականության և տնտեսական աճի վրա բացասական ազդեցության չափի ներկայացումը, դրա կանխարգելման պետական ռազմավարությունների, ինչպես նաև առկա խթանների ներկայացումը կարևոր գործիքներ են կառավարությունների համար՝ մասնավոր հատվածին ներգրավելու բռնության կանխարգելման գործում: Բիզնես ոլորտի համար միշտ չէ, որ մատչելի է լավագույն փորձի մասին տեղեկատվություն, մինչդեռ այն կարող է լինել բռնության կանխարգելման քաղաքականության իրացման արդյունավետ միջավայր:

Խթաններ ստեղծելու համար կառավարությունները և կազմակերպությունները նաև կարող են առաջարկել հարկային արտոնություններ, ստեղծել պարգևատրման սխեմաներ կամ ներմուծել գենդերային հավասարության պիտակներ՝ մասնավոր հատվածում բռնության կանխարգելումը խթանելու նպատակով: Այդպիսի քաղաքականություն գործում է տարբեր երկրներում, թեև այն, որպես կանոն, ուղղված է առհասարակ գենդերային հավասարության, այլ ոչ՝ կոնկրետ բռնության վրա[11]: Համաշխարհային մակարդակով «Կանանց իրավազորման սկզբունքներ. Հավասարություն նշանակում է բիզնես (գլոբալ)»[12]՝ ՄԱԿ-կանայք և ՄԱԿ-ի գլոբալ պայմանագիր համատեղ նախաձեռնությունը հետամուտ է մասնավոր հատվածի հանձնառությանը և պարգևատրում է բիզնես ընկերություններին կանանց իրավունքների պաշտպանության գործում իրենց աշխատանքի համար: Սկզբունքները նախանշում են յոթ քայլ բիզնեսի համար, թե ինչպես իրավազորել կանանց աշխատավայրում, շուկայում և համայնքում: 3-րդ սկզբունքը վերաբերում է «կին և տղամարդ բոլոր

11. Բելգիայում Wo.Men@Work մրցանակը շնորհվում է այն գլխավոր գործադիր տնօրենին, որը ամենաշատն է աշխատում Բելգիայում իր ընկերությունում գենդերային հավասարության հասնելու համար www.womenatworkaward.be/concept: Վրաստանում ՄԱԶԾ-ն սահմանել է Գենդերային հավասարության մրցանակ՝ պարգևատրելու մասնավոր հատվածում գենդերային հավասարության չեմպիոններին www.ge.undp.org/content/georgia/en/home/presscenter/pressreleases/2015/07/06/gender-equality-in-business-and-politics.html:
12. Լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել՝ www.weprinciples.org:

աշխատակիցների առողջության, ապահովության և բարեկեցության երաշխավորմանը»: Թեև այս սկզբունքը հատուկ չի նշում կանանց նկատմամբ բռնության վերացման մասին, այն աշխատավայրում բռնության մասին իրազեկության բարձրացման ուղղությամբ, ինչպես նաև բոլոր երկրների և ոլորտների բիզնես առաջնորդների համար առաջին քայլն է՝ առաջնորդություն և հանձնառություն ցուցաբերելու կանանց և տղամարդկանց միջև հավասարության խթանման գործում:

Կարող են նաև ջանքեր գործադրվել պետական գնումների հետ կապված խթանների կիրառմամբ: Օրինակ՝ Ֆրանսիայում այն ընկերությունները, որոնք չեն հարգում 2014 թվականի օրենքի դրույթները կանանց և տղամարդկանց միջև իրական հավասարության մասին, կարող են բացառվել պետական գնումներին մասնակցելուց[13]:

Բացի այդ, կլոր սեղանների կազմակերպման և ցանցերի ստեղծման միջոցով պետական աջակցությունը կարող է նաև կապ ստեղծել հանրային հատվածի, մասնավոր հատվածի և հասարակական կազմակերպությունների (ՀԿ) միջև, որը կարող է հանգեցնել հանրային-մասնավոր գործընկերությունների զարգացմանը: ՀԿ-ները, հատկապես որոնք աշխատում են կանանց նկատմամբ բռնության ուղղությամբ, ունեն փորձառություն, որը կարող է օգտակար լինել մասնավոր հատվածի համար՝ իրազեկության բարձրացման և տեղական գործընկերությունների ստեղծման համար: ՀԿ-ները, օրինակ, կարող են մասնակցել ընկերություններում աշխատակիցների շրջանում իրազեկության բարձրացմանը տարբեր միջոցառումների վերաբերյալ, ինչպես օրինակ՝ Կանանց դեմ բռնության վերացման միջազգային օրն է:

Գործընկերային աջակցության սխեմաների ստեղծում՝ թիրախային ծառայությունների և փորձի փոխանակման միջոցով բռնության կանխարգելման նպատակով. Ընտանեկան բռնության դեմ կորպորատիվ ընկերությունների դաշինք[14] (ՄԹ)

Միջամտություն՝ Ընտանեկան բռնության դեմ կորպորատիվ դաշինքը (ԸԲԴԿԴ) տրամադրում է ցանց ընկերությունների համար, որոնք ցանկանում են բավարարել այն աշխատակիցների

13. Loi du 4 août 2014 sur l'égalité réelle entre les femmes et les hommes (France)՝ www.gouvernement.fr/action/la-loi-pour-l-egalite-reelle-entre-les-femmes-et-les-hommes:
14. www.caady.org.uk/:

կարիքները, որոնք ենթարկվում են ընտանեկան բռնության, կատարում են ընտանեկան բռնություն և ականատես են լինում ընտանեկան բռնության: Դաշինքն իր անդամներին առաջարկում է ուսուցողական ծրագրեր, ծառայություններ և աջակցություն, ինչպես նաև բիզնեսը՝ բիզնեսին գործիքներ՝ իրենց կազմակերպությունում ընտանեկան բռնության վերաբերյալ քաղաքականություն մշակելու նպատակով:

Արդյունքներ՝ ԸԲԴԿԴ-ն աջակցում է անդամ և ոչ անդամ ընկերություններին գործել ընտանեկան բռնության մասին աշխատակիցների կողմից տեղեկություններ հաղորդելու դեպքում: Օրինակ՝ 2013 թվականին եղել է ինքնաբացահայտման և դրա հետ կապված աջակցության 18 դեպք: Ներկայում Դաշինքի կազմում ընդգրկված են ավելի քան 50 անդամ և համագործակից ընկերություններ, որոնցում աշխատում են ավելի քան 5 միլիոն աշխատակիցներ մասնավոր, հանրային և կամավոր հատվածներում: Դաշինքն արտոնագրված ուսուցում է տրամադրել ավելի քան 10 000 աշխատակցի՝ ոչ թե խորհրդատուներ դառնալու, այլ նախազգուշական նշանները բացահայտելու և միջոցներ ձեռնարկելու համար:

Մերտած դասեր՝ ԸԲԴԿԴ-ի օրինակը ցույց է տալիս թիրախային ծառայություններ առաջարկելու և գործատուներից ցանցեր ստեղծելու, ինչպես նաև դաշնակիցներ գտնելու հնարավորությունները՝ բռնության կանխարգելման հարցերով փորձառության և լավագույն գործելակերպի փոխանակման նպատակով:

Ինչպես է գործում բռնության կանխարգելման այս մոտեցումը՝ ԸԲԴԿԴ-ն առաջարկում է գործնական ընթացակարգեր, լավագույն փորձի քաղաքականության մշակում և իրականացում, խնդրի շուրջ ուսումնասիրություն և գիտելիքներ իր անդամների համար: ԸԲԴԿԴ-ն աշխատում է որպես բիզնես ընկերությունների միջև գործընկերային աջակցության սխեմա՝ օգնելու նրանց նպաստել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելմանը:

Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման հարցում պետք է նաև ընդունվի արհմիությունների կարևորությունը: Արհմիությունները կարող են կենսական գործընկեր լինել, ինչպես նաև հանդես գալ որպես հարթակ՝ մասնավոր հատվածի տեսանկյունից գենդերային

հիմքով բռնության դեմ պայքարի ուղիների մասին գաղափարների և տեսլականների փոխանակման համար[15]:

Որպես մարդու իրավունքների խախտում՝ գենդերային հիմքով բռնության խնդրի լուծումը պետք է լինի բոլոր որոշում կայացնողների հրամայականը թե՛ հանրային և թե՛ մասնավոր հատվածներում: Իրենց ճկունության շնորհիվ՝ մասնավոր հատվածը կարող է կարևոր դեր խաղալ գենդերային հիմքով բռնության հետ կապված խնդիրների լուծման հարցում: Հաշվի առնելով ազգային և միջազգային շրջանակները՝ մասնավոր հատվածը կարող է մշակել և իրականացնել բռնության դեմ պայքարի սեփական քաղաքականությունը և միջոցները, և դա անել շատ արագ: Ընդ որում՝ կարևոր է ճիշտ հավասարակշռություն ապահովել բիզնես շահերի և գենդերային հիմքով բռնության դեմ պայքարի համար ձեռնարկված միջոցների արդյունավետության միջև: Դա ակնհայտ է եզրաբանության և դիսկուրսի մեջ: Մասնավոր կազմակերպություններում գործարար լեզուն, ներառյալ՝ այնպիսի արտահայտություններ, ինչպես «արտադրանք» և «արտադրողականություն», հավանաբար, տեղ կգտնեն գենդերային հիմքով բռնության մասին դիսկուրսում, մինչդեռ հանրային դիսկուրսն ավելի շատ կսևեռվի կանանց նկատմամբ բռնությանը՝ որպես մարդու իրավունքների խախտման վրա:

Գենդերային հիմքով բռնության վերացումը վերջնանպատակն է, ուստի կառավարությունները պետք է խրախուսեն բիզնես ոլորտին իրենց միջոցները համահունչ դարձնել պետական՝ քաղաքականությանը և մասնակցել բռնության կանխարգելմանը՝ տրամադրելով տեղեկություններ, թե ինչպես աշխատակիցների բարեկեցությունը կարող է կապված լինել տնտեսական օգուտների և բիզնեսի արդյունքների բարելավման հետ, օրինակ՝ նվազեցնելով բացակայությունները և մեծացնելով արտադրողականությունը: Ի վերջո, գենդերային հիմքով բռնության կանխարգելման և բռնության զոհերին աջակցության գործում մասնավոր հատվածի ներգրավման խնդիրն ընդհանուր հայտարարի գալն է, որը կմիավորի հանրային, մասնավոր և երրորդ հատվածների տեսլականները, ռեսուրսները և եզրաբանությունը՝ ապահովելով բոլորի կողմից ընդունելի չափանիշների կիրառումը կանանց նկատմամբ բռնության հարցերում:

15. Տե՛ս օրինակ՝ 2014 թվականի Եվրոպական արհմիությունների համադաշնության մարտի 8-ի զեկույցը, որն ուղղված է կանանց նկատմամբ բռնության կանխարգելման՝ արհմիությունների ռազմավարություններին՝ www.etuc.org/sites/ www.etuc.org/files/other/files/etuc_8th_march_survey_2014_en_eh.pdf:

Մասնավոր հատվածը որպես իր ապրանքների և ծառայությունների միջոցով կանանց նկատմամբ վերաբերմունք ձևավորող

Երբ խոսքը գնում է կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման մասին, մասնավոր հատվածը նաև կարևոր դեր է խաղում վերաբերմունք ձևավորելու հարցում: Գենդերային հիմքով բռնության նկատմամբ վերաբերմունքը փոխելու համար անհրաժեշտ է մասնավոր հատվածի աջակցությունը, քանի որ այն կարող է էական ազդեցություն ունենալ մշակութային և սոցիալական նորմերի վրա: Մի կողմից բիզնես ընկերությունները կարող են նպաստել կանանց նկատմամբ բռնության պարզունակացմանը՝ ապրանքների և ծառայությունների շուկայավարումը և մանրածախ վաճառքը կապելով բռնության հետ: Մյուս կողմից, խուսափելով գենդերային կուրությունից և կարծրատիպացումից և (կամ) ակտիվ կերպով խթանելով գենդերազգայուն ուղերձները՝ ընկերությունները կարող են նպաստել հավասարությանը և բռնության բացառմանը՝ որպես ապրանքների և ծառայությունների վերաբերյալ իրենց քաղաքականության և իրենց կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մաս: Օրինակ՝ հաճախորդների սպասարկման ոլորտի աշխատակիցներին կարելի է վերապատրաստել և տեղեկատվություն տրամադրել այն մասին, թե ինչպես վարվել իրավիճակներում, երբ հանդիպում են գենդերային հիմքով բռնության ենթարկվող հաճախորդների: Այդպիսով աշխատակազմի անդամները կարող են հաճախորդներին տրամադրել տեղեկատվություն և ուղղորդել նրանց դիմել փորձագիտական ծառայությունների՝ առանց այդ հարցում փորձագետ լինելու անհրաժեշտության:

Գոյություն ունի կանանց նկատմամբ բռնության բնականոնացման վտանգ մասնավոր հատվածի և շուկայի կողմից, երբ ապրանքների և ծառայությունների գովազդման համար օգտագործվում են ֆիզիկական և սեռական բռնության պատկերներ: Կանանց այս առարկայացումը և զոհականացումը հասարակական մակարդակով ներգործում են անհատների վրա՝ ազդելով բռնության, սեռականության և գենդերային դերերի վերաբերյալ տղամարդկանց և կանանց ընկալումների վրա: Հետազոտությունները ցույց են տալիս, որ սեռական բռնություն պարունակող գովազդից հետո տղամարդկանց համար կանանց նկատմամբ բռնությունը դառնում է ավելի ընդունելի (Capella L. et al. 2010): Եթե ապրանքների կամ ծառայությունների վաճառքը որևէ կերպ

կապված է գենդերային հիմքով բռնության հետ, ապա վաճառվում է ոչ միայն ապրանքը կամ ծառայությունը, այլև բռնությունն ընդունող վերաբերմունքը: Կանանց նկատմամբ բռնության պատկերումը՝ որպես բնականոն, արդարացված, օրինական կամ նույնիսկ ցանկալի երևույթ, ստեղծում է կանանց նկատմամբ ագրեսիվ վարքագիծն առավել ակնառու և հասարակության կողմից ընդունելի դարձնելու վտանգ:

Խիստ անհրաժեշտ է, որպեսզի ապրանքների և ծառայությունների վաճառքում տեղ չգտնեն գենդերային կարծրատիպերը կամ ֆիզիկական և սեռական բռնության թեմաների օգտագործումը: Այսօր ամենազանազան ապրանքները և ծառայությունները՝ նորաձև հագուստից և ավտոմեքենաներից մինչև հյուրանոցներ և ռեստորաններ, վաճառվում են կանանց նկատմամբ ուղղված ֆիզիկական և սեռական բռնության պատկերների օգտագործմամբ: Այդօրինակ գովազդները և շուկայավարման ռազմավարությունները նսեմացնում են կանանց կերպարը՝ գրավիչ դարձնելով բռնությունը, հաճախ ներկայացնելով այն որպես սեքսուալ, գլամուր և գրգռող մի բան: 2007 թվականին «Dolce & Gabbana» հագուստի արտադրության ընկերության գովազդը, որտեղ առանց վերնաշապիկի տղամարդը կնոջը գետնին է պահում, զայրույթ առաջացրեց և ի վերջո հանվեց շրջանառությունից: Բազմաթիվ այլ ապրանքանիշեր ևս մեղադրվել են իրենց ապրանքների և ծառայությունների գովազդում կանանց նկատմամբ բռնության թեմա ներառելու մեջ:

Բացի այդ, հարկ է նշել, որ ապրանքները և արտադրանքն ինքնին կարող են նպաստել կանանց նկատմամբ բռնության պատկերման և գենդերային դերերի աղավաղմանը կամ օգտագործվել բռնություն կատարելու համար: Օրինակներ կարելի է գտնել մասնավորապես ՏՀՏ ոլորտում: Բջջային հեռախոսների համար GPS տեղորոշիչ սարքերը կատարյալ գործիք են հետամտողների համար, ինչպես նաև սմարթֆոնների հավելվածները, որոնք թույլ են տալիս հետևել անձի գտնվելու վայրը բջջային հեռախոսի համարի միջոցով: Նմանապես RapeLay-ի պես տեսախաղերը սևեռվում են տղամարդ կերպարների վրա, որոնք հետամտում և բռնաբարում են կանանց, տղամարդկությունը կապում են տղամարդկանց գերակա լինելու և կանանց նկատմամբ բռնի ճնշումներ գործադրելու հետ[16]:

16. Տեսախաղերում կին կերպարների ներկայացման մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ www.youtube.com/watch?v=QC6oxBLXtkU&feature=youtu.be:

Կամա թե ակամա՝ այսպիսի բովանդակությամբ արտադրանքն ազդում է նրա վրա, թե ինչպես է հասարակությունն ընկալում կանանց նկատմամբ բռնությունը: Ըստ հետազոտությունների՝ տղամարդիկ, որոնք խաղացել են սեռականացված կին կերպարներ պարունակող տեսախաղեր, պակաս կարեկցանք ունեն սեռական ոտնձգություններից տուժած անձանց նկատմամբ և ավելի մեծ հավանականությամբ մեղադրում են տուժողին (Dill K. E. et al. 2008): Դրա հետ կապված՝ հարկ է նշել, որ Ստամբուլյան կոնվենցիայի 17-րդ հոդվածը կառավարությունների վրա նաև պարտավորություն է դնում մասնավոր հատվածի հետ համագործակցելով զարգացնել և խթանել երեխաների, ծնողների կամ ուսուցանողների համապատասխան հմտությունները՝ կապված նրա հետ, թե ինչպես վարվել տեղեկատվական և հաղորդակցման այնպիսի միջավայրում, որը մատչելի է դարձնում սեռական կամ բռնի բնույթի նվաստացուցիչ նյութերը:

Մինչդեռ ընկերությունները կարող են օգտագործել իրենց ապրանքները և ծառայությունները բռնության կանխարգելման նպատակով: Կանանց նկատմամբ բռնության կանխարգելումը և բռնության զոհերի աջակցությանը նպաստելը կարող են նույնիսկ դառնալ ընկերության ապրանքանիշի մի մասը: Որոշ դեպքերում արտադրանքն ինքնին իր դիզայնի շնորհիվ ծառայում է բռնության կանխարգելմանը, ինչպես «Vodafone TecSOS» նախաձեռնության դեպքում[17]: Այս բջջային հեռախոսը ստեղծվել է «Vodafone» հիմնադրամի կողմից՝ Իսպանական կարմիր խաչի հետ համագործակցությամբ, և նախատեսված է ընտանեկան բռնության ենթարկվախ մարդկանց պաշտպանության համար: Հեռախոսն ունի հատուկ կոճակ, որով ակտիվացվում է անմիջական կապն արտակարգ իրավիճակների ծառայությունների հետ՝ տրամադրելով տուժողի գտնվելու վայրի մասին տեղեկություններ և գործարկելով նրա շրջակայքում տեղի ունեցող գործունեության տեսաձայնագրումը: Այս բջջային սարքից օգտվել են ավելի քան 30 000 կանայք Իսպանիայում, Իտալիայում, Պորտուգալիայում, Հունգարիայում, Իռլանդիայում և Միացյալ Թագավորությունում:

Հաշվի առնելով այն ազդեցությունը, որն ունի մասնավոր հատվածը կանանց նկատմամբ բռնության հանդեպ վերաբերմունքի ձևավորման

17. Vodafone TecSOS homepage՝ www.vodafone.com/content/index/about/foundation/mobiles_for_good/tecsos.html:

առումով, կառավարությունները պետք է խթանեն վերջիններիս աշխատակիցների ներգրավումը գենդերային կուրության և կարծրատիպերի հաղթահարման գործում: Կառավարությունները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ խրախուսելու մասնավոր հատվածին զերծ մնալ սեքսիստական, բռնի և վնասակար բովանդակության օգտագործումից ապրանքների և ծառայությունների դիզայնի, ինչպես նաև շուկայավարման ոլորտում: Մի շարք պետություններ արդեն իսկ ընդունել են գովազդային բովանդակության հետ կապված կարգավորող շրջանակ և ստեղծել անկախ մարմիններ, որոնք պատասխանատու են գովազդի էթիկական ասպեկտի, ներառյալ՝ մարդու իրավունքների և գենդերային հավասարության վերաբերյալ հարցերի համար, և որոնք կարող են նաև բողոքներ ստանալ հասարակությունից[18]:

Կարելի է նաև սահմանել խթաններ՝ նպաստելու կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում գենդերային հարցերի և (կամ) կանանց արժանապատվության հետ կապված հանձնառությունների ստանձնմանը: Դա կարելի է անել առանձին ընկերության հանձնառությունների միջոցով, ինչպես նաև հորդորելով գործարար հատվածին ներգրավվել գենդերային հավասարության և կանանց արժանապատվության վերաբերյալ էթիկական չափանիշների մշակման գործընթացում[19]:

Այդպիսի հանձնառությունները կարող են վերահսկվել և գնահատվել՝ գենդերային պաշտպանության պարզևատրման սխեմաների, հավասարության պիտակների կամ բռնության բացառման համար մրցանակների միջոցով: Քաղաքական առաջնորդության միջոցով կառավարությունները կարող են սահմանել չափանիշներ և ընդգծել մասնավոր հատվածում գենդերային հիմքով բռնության կանխարգելման կարևորությունը:

Սպառողների միջոցով բիզնես ընկերությունների ներգրավումը մեկ այլ եղանակ է, որի միջոցով կառավարությունները կարող են փորձել խթանել մասնավոր հատվածի մասնակցությունը: Արտադրանքի դիզայնի և շուկայավարման մեջ բռնության և սեռական բովանդակության օգտագործման դեմ քաղաքացիների ընդվզելու

18. Այս մասին օրինակներ տե՛ս XX-րդ էջից սկիզբ առնող գլխում:
19. Գենդերային հավասարության և լրատվամիջոցների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2013)1 հանձնարարականի կատարման մասին ձեռնարկ (էջ 25-27):

մշակույթի խրախուսման նպատակով հանրային իրազեկությունը կարող է ապահովվել սպառողներին միտված քարոզարշավների միջոցով: Ուստի մասնավոր հատվածի ներկայացուցիչների ներգրավման համար կարելի է ընդգծել ապրանքների և ծառայությունների նվաստացուցիչ բովանդակության պատճառով սպառողների կողմից դրանք բոյկոտելու վտանգը:

Մասնավոր հատվածի ներգրավումն իրազեկության բարձրացմանն ուղղված ծրագրերում և բռնության զոհերին աջակցության տրամադրման գործում

Մեկ այլ դեր, որ կարող է ստանձնել մասնավոր հատվածը, իրազեկության բարձրացումն է կամ բռնության ենթարկված մարդկանց համար նախատեսված ծառայությունների կամ բռնության վերացմանն ուղղված ծրագրերի ֆինանսական աջակցության տրամադրումը: Դա կարող է իրականացվել քարոզարշավներին և դրամահայթայթմանը մասնակցության միջոցով կամ շահույթ չհետապնդող մասնաճյուղի, օրինակ, հիմնադրամի միջոցով: Բիզնես ընկերությունները կարող են նաև ստեղծել գործընկերություններ տեղական կամ ներպետական մակարդակներում՝ համապատասխան կազմակերպությունների և ծառայությունների սատարման համար:

Որպեսզի մասնավոր հատվածը կարողանա հաջողությամբ աջակցել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելմանն ուղղված ծրագրերին, անհրաժեշտ է լավ ենթակառուցվածք և այդ հարցի վերաբերյալ փորձագիտական գիտելիքներ: Բռնության դեմ պայքարի մեկ այլ առանցքային բաղադրիչ է ուղերձներ հղելու և ռեսուրսների բաշխման հարցում ուժեղ առաջնորդությունը: Մասնավոր հատվածի համար կարող է կարևոր լինել նաև ունենալ տղամարդ և կին ներկայացուցիչներ գենդերային հիմքով բռնության մասին բարձրաձայնելու համար, և ոչ թե միայն տուժողները պետք է խոսեն բռնության մասին: Առավել ռիսկային է կանայք և աղջիկների բռնության ենթարկվելը, բայց թե՛ տղամարդիկ և թե՛ կանայք կարող են ենթարկվել ընտանեկան բռնության : Տղամարդկանց և տղաների մասնակցությունը գենդերային հիմքով բռնության վերաբերյալ իրազեկության բարձրացմանը կարևոր է, քանի որ երկու սեռերն էլ տուժում են բռնության հետևանքներից: Բացի այդ, ծրագրերն արդյունավետ են, երբ տղամարդիկ պատասխանատվություն են վերցնում տղամարդկանց կողմից կատարված բռնությունների համար և ներգրավվում են խնդրի լուծմանը:

Բռնության և իրազեկության բարձրացման հարցերով զբաղվող ՀԿ-ների հետ գործընկերությունների ստեղծում. «Kering PPR» հիմնադրամը՝ հանուն կանանց արժանապատվության և իրավունքների (Ֆրանսիա/միջազգային)

Միջամտություն՝ «Kering» ֆրանսիական միջազգային մանրածախ ընկերությունը մասնագիտացված է շքեղ և սպորտային ապրանքների վաճառքում: Ընկերության աշխատակիցների և հաճախորդների մեծ մասը կանայք են: 2008 թվականից ի վեր «Kering» հիմնադրամը պայքարում է կանանց նկատմամբ բռնության դեմ՝ ցուցաբերելով համալիր մոտեցում՝ օգնելու նախքան բռնությունը (կանխարգելում), բռնության ընթացքում (խնամք և աջակցություն) և բռնությունից հետո (մասնագիտական վերապատրաստում և ներառում): Հիմնադրամը գործընկերություններ է ստեղծել մեծ թվով ՀԿ-ների հետ, որոնք հետամուտ են կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարին: Նախաձեռնությունը ներառում է նաև սոցիալական ձեռներեցներին ուղեկցելը, ինչպես նաև տեղական համայնքների և պետական մարմինների մասնակցությամբ կայուն ծրագրերի սատարումը: Օժանդակության հիմնական ձևերն են ֆինանսական աջակցությունը և մարդկային ռեսուրսները՝ մոբիլիզացնելով «Kering Group»-ի աշխատակիցներին: Հիմնադրամը նաև ներգրավված է կանանց նկատմամբ բռնության հետ կապված իրազեկության բարձրացման և կանխարգելման նախաձեռնություններում: Միջոցառումները ներառում են դրամահայթայթում և աջակցություն լուսանկարչական ցուցահանդեսներին, ֆիլմերին և քարոզարշավներին, որոնք ուղղված են կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացմանը: Ֆրանսիայում «Kering Group»-ը ստորագրել է Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի Խարտիան:

Արդյունքներ՝ ըստ գնահատումների՝ 2013 թվականին «Kering» հիմնադրամի գործունեությունը ներառել է 140 000 կնոջ ամբողջ աշխարհում 47 երկարաժամկետ գործընկերությունների շնորհիվ, որոնք նախաձեռնվել են Եվրոպայի, Աֆրիկայի, Ասիայի և Ամերիկայի ՀԿ-ների հետ:

Մերտած դասեր՝ մասնավոր հատվածի ընկերությունները կարող են կարևոր դեր խաղալ կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի գործում՝ տրամադրելով ռեսուրսներ, օգտագործելով իրենց հեղինակությունը և հայտնիությունը՝ դրանով իսկ դրական ազդեցություն ունենալով կառավարությունների

վրա: «Kering» հիմնադրամը զգալի ազդեցություն ունի խմբի 33,000 աշխատակիցների և իր համաշխարհային ճանաչելիության շնորհիվ: Փորձը ցույց է տվել, որ հաջողության հասնելու համար ծրագիրը պետք է նաև ապահովի տեղական հմտությունների փոխանցումը և ընդհանուր առմամբ համայնքի հետ աշխատանքը՝ ներառելով բոլոր համապատասխան շահակիր կողմերին: Ուստի իր գործընկերներին և աջակցության ծրագրերն ընտրելիս հիմնադրամը հաշվի է առնում այս չափանիշները: Որպես հաջորդ քայլ հիմնադրամը նախատեսում է աշխատանք տանել վարքագծի փոփոխության ուղղությամբ և ծրագրում է ավելի շատ ուշադրություն դարձնել բռնության կանխարգելմանը:

Ինչպես է գործում բռնության կանխարգելման այս մոտեցումը՝ հասարակական մակարդակով հիմնադրամի կողմից քարոզարշավների աջակցությունը բարձրացրել է կանանց նկատմամբ բռնության շուրջ իրազեկության և մտահոգվածության մակարդակը: Ընկերության մակարդակով հիմնադրամը աշխատանք է կատարել ընտանեկան բռնության թեմայի շուրջ խմբի աշխատակիցներին տեղեկացնելու և ներգրավելու ուղղությամբ:

Ապրանքների վաճառքը նույնպես կարող է օգտագործվել կանանց նկատմամբ բռնության կանխարգելմանը նպաստելու համար՝ իրազեկության բարձրացման և դրամահայթայթման միջոցով: Ապրանք գնելիս տեղեկացված սպառողը կարող է իր ընտրությամբ նպաստել որևէ էթիկական խնդրի: Նմանօրինակ նախաձեռնության օրինակ կարելի է գտնել «The Body Shop» գեղեցկության և կոսմետիկ միջոցների միջազգային ընկերությունում: Ընկերությունը նպատակ ունի կոտրել ընտանեկան բռնության շուրջ լռությունը՝ իր աշխատակիցներին ներգրավելով կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացմանն ուղղված համաշխարհային գլոբալ քարոզարշավում: Արշավի շրջանակներում վաճառվող ապրանքի մի մասի հասույթը հատկացվել է ընտանեկան բռնության զոհերին աջակցելու նպատակով: «Դադարեցրեք բռնությունը տանը» քարոզարշավը մեկնարկել է 2003 թվականին: Մինչև 2008 թվականն այն ներգրավել է 56 շուկա և հավաքել 3.6 միլիոն ֆունտ՝ ընտանեկան բռնության հետ կապված բարեգործական նպատակներով[20]:

20. «The Body Shop» միջազգային ընկերության փի էլ սի (Plc) արժեքների 2009 թվականի զեկույց՝ www.thebodyshop-usa.com/pdfs/values-campaigns/Values_report_lowres_v2.pdf: Տե՛ս նաև՝ www.thebodyshop-usa.com/values-campaigns/stop-violence.aspx:

Գեղեցկության և կոսմետիկ միջոցների մեկ այլ միջազգային ընկերության օրինակ է «Avon» ընկերությունը, որը զբաղվում է ընտանեկան և գենդերային հիմքով բռնության դեմ պայքարի ոլորտում դրամահայթայթման, լոբբինգի և իրազեկության բարձրացման գործունեությամբ: Ընկերությունը ձգտում է բարձրացնել հանրային իրազեկությունը անհատների և համայնքի վրա գենդերային հիմքով բռնության ազդեցության վերաբերյալ՝ հանրության վերաբերմունքը փոխելու նպատակով: «Avon» ընկերությունը գտնում է գործընկերներ և աշխատում է նրանց հետ՝ հետազոտությունների արդյունքները ներկայացնելու և գործատուներին և ֆինանսավորողներին ներգրավելու կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարում: 2004 թվականից ի վեր «Avon» հիմնադրամը նվիրաբերել է 58 միլիոն դոլար շահույթ չհետապնդող կազմակերպություններին՝ իրազեկության բարձրացման, աջակցության ծառայությունների և կանխարգելման ծրագրերի իրականացման ոլորտում[21]:

Կարևոր է նաև բարձրացնել իրազեկությունը կանանց նկատմամբ բռնության հարցերի հետ կապված դրամահայթայթման գործում իր գործընկերային միջոցառումների և գերակայությունների շրջանակներում մասնավոր հատվածի առավել ակտիվ մասնակցության անհրաժեշտության վերաբերյալ[22]: 2009 թվականին եվրոպական 42 հիմնադրամների հատկացրած դրամաշնորհների ընդամենը 4.8 տոկոսից են օգտվել կանայք և աղջիկները, և դրանց ընդամենը մեկ հինգերորդն է ուղղված եղել կանանց մարդու իրավունքներին (Mama Cash 2011): Ուստի խիստ կարևոր է, որպեսզի մասնավոր ֆինանսավորողները և հիմնադրամները ավելի շատ ներգրավվեն գործընկերությունների ստեղծման և կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարին ուղղված միջոցառումների ֆինանսավորման գործում՝ հաշվի առնելով տվյալ երևույթի տարածվածությունը, ինչպես նաև խնդրի լուծման համար տրամադրվող պետական ֆինանսավորման կրճատումը:

---

21. www.avonfoundation.org/causes/domestic-violence/funding/, www.avonfoundation.org/causes/domestic-violence/funding/avon-communication-awards/:
22. ՏՀԶԿ-ԶԱԿ-ի ուսումնասիրությունների համաձայն՝ 2012-2013 թվականների ընթացքում համաշխարհային մակարդակով օգնության ընդամենը 5 տոկոսն է ուղղվել գենդերային հավասարության խնդրին՝ որպես հիմական նպատակի: Լրացուցիչ տեղեկություններ՝ www.unwomen.org/en/news/in-focus/financing-for-gender-equality#sthash.jnNJmK6g.dpuf:

Լրատվամիջոցները և կանանց նկատմամբ բռնության կանխարգելումը

Ստամբուլյան կոնվենցիայի դրույթները, որոնք մասնակից պետություններից պահանջում են խրախուսել լրատվամիջոցների մասնակցությունը կանանց նկատմամբ բռնության կանխարգելմանը, լրացվում են չպարտադիր չափանիշներով, որոնք տրամադրում են առավել մանրամասն գործնական հանձնարարականներ, թեև չպետք է այդ դրույթները կարող են գործնական ուժի իրառվել: Գենդերային հավասարության և լրատվամիջոցների վերաբերյալ անդամ պետությունների Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2013)1 հանձնարարականը կոչ է անում որդեգրել հատուկ միջոցներ[23], մասնավորապես, որ՝

> Անդամ պետությունները պետք է որդեգրեն համապատասխան իրավական դաշտ, եթե այդպիսին դեռ գոյություն չունի, որի նպատակն է լրատվամիջոցներում մարդկային արժանապատվության սկզբունքի նկատմամբ հարգանքի ապահովումը, ինչպես նաև սեռի հիմքով ցանկացած խտրականության, ատելության հրահրման և գենդերային հիմքով բռնության ցանկացած ձևի արգելումը (կետ Ա.1)

և որ՝

> Լրատվական կազմակերպություններին պետք է խրախուսվի ընդունել ինքնակարգավորման մեխանիզմներ, ներքին վարքականոններ կամ էթիկայի կանոնագրքեր և ներքին վերահսկողություն, մշակել լրատվական լուսաբանումների չափանիշներ, որոնք խթանում են գենդերային հավասարությունը՝ խթանելու հետևողական ներքին քաղաքականություն և աշխատանքային պայմաններ, որոնք ուղղված են կանանց և տղամարդկանց չկարծրատիպացվող պատկերման, դերի և տեսանելիության ապահովմանը, սեքսիստական բնույթի գովազդներից, ձևակերպումներից և բովանդակությունից զերծ

23. Տե՛ս նաև Գենդերային հավասարության և լրատվամիջոցների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2013)1 հանձնարարականի կատարման մասին ձեռնարկ:

մնալուն, որոնք կարող են հանգեցնել սեռի հիմքով խտրականության, ատելության հրահրման և գենդերային հիմքով բռնության (կետ Բ.4)

Այս հանձնարարականը սևեռվում է կանանց նկատմամբ բռնության կանխարգելման նպատակով լրատվական լուսաբանման և հաղորդումների կարևորությանը՝ որպես գենդերային հավասարության խթանման մաս: Բացի այդ, մի շարք անդամ պետություններ ընդունել են մեդիա բովանդակությունում գենդերային հավասարության, մարդկային արժանապատվության և կանանց նկատմամբ բռնության հետ կապված կարգավորող դաշտ[24]: Լրատվամիջոցների և հաղորդակցությունների հատվածի կառուցվածքային կազմակերպումը, այդ թվում՝ լրատվական մասնագիտությունների գենդերային կազմը և լրատվության ոլորտում որոշումներ կայացնողների շրջանում կանանց ներկայությունը նույնպես ազդում է կանանց նկատմամբ բռնության կանխարգելմանը մասնակցելու լրատվամիջոցների կարողության և պատրաստակամության վրա[25]: Ցույց է տրվել, որ կանանց մասնակցությունը լրատվամիջոցներում հանգեցնում է դրական փոփոխությունների՝ կապված կանանց նկատմամբ բռնության կանխարգելման ոլորտում լրատվամիջոցների ներգրավվման հետ: Մասնավորապես՝ լրատվության ոլորտում կանանց սեփական նախաձեռնությունները՝ սոցիալական մեդիայում ցանցային և հավաքական գործողությունների միջոցով, հանգեցրել են բռնաբարությունների և սեքսիստական վերաբերմունքի մասին հաղորդումների աճին[26]:

Այս բաժնում քննարկվում է կանանց նկատմամբ բռնության

24. Տե՛ս xx-րդ էջից սկիզբ առնող գլուխը: Բացի այդ, անդամ պետություններում հեռուստահեռարձակման գործունեության վերաբերյալ օրենքով, կանոնակարգերով կամ վարչական գործողություններով սահմանված որոշ դրույթների համակարգման մասին Խորհրդի 89/552/EEC հրահանգի մեջ փոփոխություններ մտցնելու վերաբերյալ Եվրոպական միության 2007/65/EC հրահանգը նախատեսում է, որ՝ «Անդամ պետությունները պատշաճ միջոցներով պետք է ապահովեն, որ իրենց իրավազորության ներքո գտնվող մեդիա ծառայություն մատուցողների կողմից տրամադրված տեսալսողական մեդիա ծառայությունները չպարունակեն ռասայի, սեռի, կրոնի կամ ազգության հիմքով ատելություն հրահրող որևէ դրսևորում» (հոդված 3ա), և որ «տեսալսողական առևտրային հաղորդագրությունները չպետք է՝ (…) պարունակեն կամ սերմանեն խտրականություն սեռի, ռասայի, էթնիկ ծագման, ազգության, կրոնի կամ դավանանքի, հաշմանդամության, տարիքի կամ սեռական կողմնորոշման հիմքով» (հոդված 3բ):
25. Եվրոպայի խորհուրդ (2013 թ.), «Լրատվամիջոցները և կանանց կերպարը», էջ 5:
26. Նույն տեղում, էջ 11:

կանխարգելման գործում լրատվամիջոցների ներգրավվածությունը և հնարավոր միջոցները, որոնք մասնակից պետությունները կարող են ձեռնարկել նրանց մասնակցությունը խրախուսելու համար երկու մակարդակներում՝ օգտագործելով լրատվամիջոցները կանանց նկատմամբ բռնության կանխարգելման նպատակով («մեդիայի միջոցով») և համոզելով լրատվամիջոցներին զերծ մնալ գենդերային կարծրատիպերից և որդեգրել գենդերազգայուն մոտեցում կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ հաղորդումներում («մեդիա բովանդակության մեջ»):

Լրատվամիջոցների դրական դերի խթանումը կանանց նկատմամբ բռնության կանխարգելման գործում

Լրատվամիջոցները կարևոր դեր են խաղում այն հարցում, թե ինչպես է հասարակությունն ընկալում կանանց և տղամարդկանց: Հետևաբար, բոլոր լրատվամիջոցները (տպագիր մամուլ, հեռուստատեսություն, ռադիո և սոցիալական մեդիա) մեծ ազդեցություն ունեն նաև ընտանեկան բռնության և կանանց դեմ բռնության վերաբերյալ հանրության իրազեկության վրա: Մի շարք հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ Եվրոպայում լրատվամիջոցները և հանրաճանաչ հեռուստածրագրերն էական ազդեցություն ունեն ընտանեկան բռնության շուրջ հասարակական վերաբերմունքի ձևավորման և ընդունելիության հարցում (Seymour E. 2004): Ուստի՝ լրատվամիջոցները կարևոր դեր են խաղում ընտանեկան բռնության՝ որպես անընդունելի սոցիալական երևույթի, ինչպեսև տնտեսական խնդրի շուրջ հանրային իրազեկության բարձրացման հարցում:

Ընտանեկան բռնության կամ կանանց նկատմամբ բռնության հարցեր լուսաբանելիս լրատվամիջոցները պատասխանատու են ճշգրիտ և հավասարակշռված հաղորդումներ ներկայացնելու համար: Մի շարք հարցումների համաձայն՝ գենդերային հիմքով բռնության վերաբերյալ իրազեկության մակարդակը սրընթաց աճել է Եվրոպայում վերջին տասնամյակի ընթացքում: Ըստ 2010 թվականի Եվրոբարոմետրի զեկույցի՝ եվրոպացիների 98 տոկոսը գիտակցում է, որ ընտանեկան բռնությունը կարևոր խնդիր է, որը պետք է լուծել: Իրազեկության մակարդակի աճը զգալիորեն ամրապնդվել է կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության մասին լրատվամիջոցների լուսաբանմամբ (Եվրոբարոմետր, 2010 թ.):

Գենդերային հիմքով բռնության վերաբերյալ արդյունավետ լրատվական քարոզարշավներ մշակելիս անհրաժեշտ է վաղ փուլերում ստեղծել գնահատման և մոնիթորինգի մեխանիզմներ: Դա կբարձրացնի թիրախային լսարաններին քարոզարշավի ուղերձների արդյունավետ կերպով հասնելու հավանականությունը: Ինչպես արդեն նշվել է, այս հարցը լուսաբանող լրատվամիջոցները պետք է նաև աշխատեն բարձրացնել գենդերային անհավասարության կառուցվածքային խնդիրների շուրջ իրազեկությունը, որոնք կարևոր բաղադրիչ են գենդերային հիմքով բռնության համատեքստում, և ոչ թե կանանց նկատմամբ բռնությունը ներկայացնեն որպես միայն անհատապես կանանց վրա ազդող խնդիր:

Բացի այդ, սոցիալական մեդիան նույնպես ազդում է գենդերային հիմքով բռնության նկատմամբ անհատական և հասարակական արձագանքի վրա: Հաղորդակցման նոր տեխնոլոգիաների հետ մեկտեղ ի հայտ են գալիս նոր գործիքներ և հարթակներ, որտեղ կարող են արմատավորվել բռնությունը և սեռական բռնությունը: Սոցիալական մեդիայում գենդերային հիմքով բռնությունը կարող է դրսևորվել տարբեր ձևերով՝ կիբեռբուլինգ, կիբեռհետամտում, առցանց ժամադրությունների չարաշահում, սեռական բռնության պատկերների կամ սպառնալիքների ձայնագրում և տարածում, կանանց նկատմամբ ատելության խոսքի սերմանում, սոցցանցերի միջոցով թրաֆիքինգի նպատակով կանանց և աղջիկների հավաքագրում և անչափահասների առցանց շահագործում: Սոցիալական մեդիան չի ստեղծում գենդերային հիմքով բռնություն, սակայն կարող է հեշտությամբ այն հրահրել, արդարացնել կամ ծառայել որպես կանանց և աղջիկների նկատմամբ չարաշահող վարքագծի գործիք (Fairbairn J. et al. 2013), այդ թվում նաև սեքսիստական բնույթի ատելության խոսքի սերմանման համար: Կանանց որոշ խմբեր սեքսիստական բնույթի ատելության առանձնահատուկ թիրախ են, մասնավորապես՝ երիտասարդ կանայք, լրագրող կանայք, ինչպես նաև լրատվամիջոցներում, խաղերում, քաղաքականությունում և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ներգրավված կանայք: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր կին, որն իր կարծիքն է արտահայտում գրավոր կամ բանավոր կերպով, սեքսիստական բնույթի ատելության խոսքի հավանական թիրախ է թե՛ առցանց և թե՛ ցանցից դուրս: Բոլոր շահակիր կողմերը, այդ թվում և լրատվամիջոցները պետք է անդրադառնան այս ահազնացող երևույթին, որով կանայք ամեն օր սեռական բնույթի սպառնալիքներ և վիրավորանքներ են ստանում էլեկտրոնային նամակների, վեբկայքերի, սոցիալական մեդիայի կամ այլ միջոցներով: Բացի այդ,

սոցիալական մեդիայի անանուն բնույթը կարող է լինել բռնություն գործադրողների անպատժելիության գործոններից մեկը: Այս առումով լրատվական կազմակերպությունների հետ համատեղ նախաձեռնվող մեդիագրագիտության քարոզարշավները խիստ կարևոր են: Այդպիսի օրինակներ ներկայացված են հաջորդ բաժնում:

Այնուամենայնիվ, սոցիալական մեդիան միայն մարտահրավերներ չի ստեղծում գենդերային հիմքով բռնության դեմ պայքարի համար, այլև առաջարկում է թվային միջավայրում բռնության դեմ մոբիլիզացվելու յուրօրինակ դինամիկա և նոր հնարավորություններ: Օրինակ՝ Սլովակիայում կանանց յոթ կազմակերպություններ ներգրավվել են «Հինգերորդ կինը»[27] լրատվական արշավում՝ սևեռվելով կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ լրատվական արշավներում տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառմանը:

Սեքսիզմի դեմ պայքարի փորձի փոխանակում և սատարում առցանց եղանակով՝ «Ամենօրյա սեքսիզմ» ծրագիրը[28] (միջազգային)

Միջամտություն՝ «Ամենօրյա սեքսիզմ» ծրագիրը ցույց է տալիս, որ սոցիալական մեդիան կարող է օգտագործվել փոխելու այն մոտեցումը, թե ինչպես են կանայք պատկերվում հասարակության մեջ: Ծրագիրը կառուցված է ինտերակտիվ առցանց հարթակի շուրջ, որտեղ կանայք կարող են փոխանակվել սեքսիզմի և խտրականության սեփական փորձով: Քսաներկու երկրից կայքում արձանագրվել են վկայություններ իրենց երկրի լեզվով և անգլերենով:

Արդյունքներ՝ կայքը վկայություններ է ստացել ամբողջ աշխարհի կանանցից, որոնք անդրադարձել են կանանց նկատմամբ խտրականության և բռնության տարբեր ձևերին: Նպատակն է ստեղծել այդ վկայությունների կրիտիկական զանգված, որպեսզի հասարակությունն այլևս չկարողանա անտեսել խնդիրը:

Սերտած դասեր՝ ինտերնետի տրամադրած՝ առցանց մոբիլիզացման և անանունության պոտենցիալի կիրառումը հզոր միջոց է իրազեկության մակարդակը բարձրացնելու և սեքսիզմի դեմ պայքարի ու բռնության ենթարկված անձանց բարձրաձայնելու հնարավորություն տալու համար:

---

27. Ծրագրի եզրափակիչ գնահատումը՝ www.apcwomen.org/gemkit/en/practitioners/reports_221f. htm#jump8:
28. Տե՛ս http://everydaysexism.com/:

Ինչպես է գործում բռնության կանխարգելման այս մոտեցումը՝ «Ամենօրյա սեքսիզմ» ծրագրի նպատակն է գրանցել սեքսիզմի ենթարկվելու դեպքերը, որոնց ամեն օր բախվում են կանայք: Դրանք կարող են լինել լուրջ կամ աննշան, չափազանց վիրավորական կամ այնքան սովորական դարձած, որ կանայք նույնիսկ չեն էլ զգում, որ բողոքելու իրավունք ունեն: Ամբողջ աշխարհից հավաքված պատմությունների միջոցով այս երևույթի կառուցվածքային բնույթի մատնանշումն օգնում է փոխել ամենօրյա սեքսիզմի նկատմամբ ընկալումը և իրավազորում կանանց գործել դրա դեմ:

Կանանց նկատմամբ բռնության կանխարգելումը լրատվությունից գենդերային կարծրատիպերի արմատախիլ անելու միջոցով

Թեև լրատվամիջոցներում գենդերային հիմքով բռնության վերաբերյալ լրատվությունը մեծացել է, սակայն կարծրատիպացումը դեռևս շատ տարածված է: Կանանց նկատմամբ բռնության, ինչպես նաև ընտանեկան բռնության պատկերումը կարող է խնդրահարույց լինել, քանի որ լրատվամիջոցները, որպես կանոն, նախապատվություն են տալիս բացասականին և արտասովորին: Լրատվամիջոցներում հաճախ բացակայում է բռնության պատճառների հանգամանալի վերլուծությունը, քանի որ պատմություններում հաճախ աղավաղված և սենսացիոն ձևով են ներկայացվում իրադարձությունները և հանցագործությունները, ինչպես օրինակ՝ բռնաբարությունն է: Սենսացիոն հաղորդումների այս ձևը հղի է հասարակության մեջ բռնությունը բնականոն երևույթ դարձնելու վտանգով:

Ընտանեկան բռնության վերաբերյալ նույնիսկ լավագույն մղումներով հաղորդումները կարող են խորացնել կարծրատիպացումը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ լրատվամիջոցները կարող են դրդել հասարակությանը արդարացնել կանանց նկատմամբ բռնությունը՝ անտեղի կենտրոնանալով բռնության ենթադրյալ «պատճառների» վրա (Herrera C. and Exposito F. 2009): Զրո հանդուրժողականության (2012 թ.) զեկույցում նշվում է, որ ընտանեկան բռնության աղավաղված լրատվական լուսաբանումը կարող է ազդել ինչպես անհատների վարքագծի, այնպես էլ նրանց վերաբերմունքի վրա: Ընտանեկան բռնության մասին կարծրատիպային լրատվությունը, օրինակ, ներկայացնելով, որ դա

հավասար կողմերի միջև խառնաշփոթ և բարդ հարաբերություններ են, այլ ոչ թե մեկ անձի կողմից մյուսի նկատմամբ իշխանության և վերահսկողության դրսևորում, կարող է խրախուսել բռնի զուգընկերոջ հետ բնակվող կնոջը շարունակել այդպես ապրել՝ վախենալով, որ այլապես իրեն լուրջ չեն ընդունի:

Թեև վիճակագրությունը ցույց է տալիս, որ կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերը, ներառյալ՝ ընտանեկան բռնությունը, ազդում են կանանց վրա սոցիալական բոլոր շերտերում և անկախ նրանց սոցիալ-տնտեսական կարգավիճակից, այդ բազմազանությունը ներկայացված չէ տվյալ հարցի շուրջ լրատվության մեծ մասում: Որպես տուժող՝ կանանց որոշակի խմբերի չափազանց ներկայացումը, ինչպես օրինակ՝ սոցիալապես և տնտեսապես անապահով խավերից, միայն խորացնում է կարծրատիպերը և քողարկում այն փաստը, որ կանանց նկատմամբ բռնություն գործադրվում է այն պատճառով, որ նրանք կին են, այլ ոչ թե նրանց սոցիալ-տնտեսական կարգավիճակից ելնելով: Միևնույն ժամանակ լրատվության մեծ մասը, որպես կանոն, ուշադրությունը սևեռում է կանանց վրա՝ որպես տուժողների, այլ ոչ թե բռնություն գործադրած տղամարդկանց վրա՝ դուրս թողնելով գլուխկոտրուկի կարևոր մասը: Կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերի վերաբերյալ էթիկական հաղորդումների պատրաստումը նաև պետք է ներառի կանանց բռնաբարող և նրանց նկատմամբ բռնություն գործադրող տղամարդկանց տեսակետների, ինքնության և համոզմունքների ուսումնասիրություն:

Գենդերի և կանանց նկատմամբ բռնության ընկալման ձևավորման գործում լրատվամիջոցների դերի վերաբերյալ հետազոտությունները մատնանշում են, որ լրատվական հաղորդումներում կանայք հաճախ առարկայացվում են, իսկ բռնությունը բացատրվում է մակերեսային պատճառներով: Յուրաքանչյուր պատմություն ներկայացվում է որպես առանձին և եզակի երևույթ: Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության՝ որպես կառուցվածքային խնդրի վերլուծության այս բացը միտում ունի բնականոն դարձնել այդ հարցը: Այն ենթադրում է, որ դա «այլոց» տարերային և արտասովոր խնդիրն է, այլ ոչ թե ընդհանուր երևույթ, որը վերաբերում է բոլորին հասարակությունում:

«Պարզապես կանայք» զեկույցը (Eaves et al. (2012), որը հրապարակվել է ՄԹ-ում որպես Լևեսոնի հետաքննության[29] մաս, վերլուծել է, թե ինչպես են կանանց նկատմամբ բռնության հանցագործությունները լուսաբանվել բրիտանական 11 ազգային լրագրերում 2012 թվականին երկշաբաթյա ժամանակահատվածում: Զեկույցի համաձայն՝ կանանց նկատմամբ բռնության հաղորդումների ներկայացման ձևն ամրապնդում է առասպելները և արմատավորում կարծրատիպերը: Լուսաբանումը հաճախ ճշգրիտ չէ և նվազագույնի է հասցնում բռնություն գործադրողի գործողությունները՝ մեղավորությունը դնելով տուժողի կամ այլոց վրա:

Կարծրատիպացումը կանխելու նպատակով լրատվամիջոցներում անհրաժեշտ է օգտագործել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության գենդերազգայուն ներկայացում: Գենդերային հիմքով բռնության վերաբերյալ լրատվությունը պետք է ներկայացվի ավելի լայն համատեքստում: Լրատվական կազմակերպությունները կարող են նպաստել գենդերային հիմքով բռնության՝ որպես կանանց և տղամարդկանց միջև անհավասարության հետ կապված կառուցվածքային խնդրի ավելի լավ ընկալմանը: Առավելևս, դրանք պետք է օգնեն ընդգծել, որ այսօրինակ բռնությունը մասնավոր խնդիր չէ:

Կանանց նկատմամբ բռնության գենդերազգայուն հաղորդման օրինակ է «Radiotelevisione Italiana (RAI) 3» հեռուստաալիքը: Այն ներգրավված է կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ իրազեկության բարձրացման գործում՝ հեռարձակելով Amore Criminale (Քրեական սեր) խորագրով շաբաթական ծրագիր: Հաղորդաշարի նպատակը կանանց նկատմամբ բռնությունը ոչ կարծրատիպային ձևով պատկերելն է՝ ներկայացնելով ավելի քան 100 դեպք կանանց կյանքից, որոնց սպանել կամ լրջորեն վնասել են իրենց զուգընկերները: Բելգիայում «Լրատվամիջոցների էմանսիպացիայի էֆեկտի զեկույց» նախաձեռնության նպատակը հեռուստածրագրերում գենդերի արդարացի պատկերումն է գենդերային գնահատման հեռուստատեսային պատշաճ գործիքների ներմուծման միջոցով:

29. Լևեսոնի հետաքննություն՝ 2011 թվականին ՄԹ-ում հեռախոսների հաքերային սկանդալից հետո լրագրողական էթիկայի մանրամասն քննություն: Հետաքննությունը կազմված է չորս մոդուլից, որոնք գնահատում են մամուլի և հանրության, ոստիկանության և քաղաքական գործիչների միջև հարաբերությունները:

Բացի այդ, կարծրատիպացումից կարելի է խուսափել ոչ սեքսիստական ձևակերպումների խթանման և սեքսիստական բնույթի զովազդներից և բովանդակությունից խուսափելու միջոցով: Օրինակ՝ Իտալիայում կին լրագրողների «Giulia» ընկերակցությունը խրախուսում է օգտագործել ոչ սեքսիստական ձևակերպումներ և փորձում է իտալական լրատվամիջոցներում ճշգրիտ տեղեկություններ տրամադրել գենդերային հիմքով բռնությունների վերաբերյալ: Շոտլանդիայում «Զրո հանդուրժողականություն» բարեգործական կազմակերպությունը հրապարակել է կանանց նկատմամբ բռնության խնդիրների որակյալ լուսաբանման չափանիշների լրատվական ուղեցույց: Այլ կազմակերպություններ մշակել են կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ լրատվության ուղենիշներ, որոնք օգտակար գործիքներ են և կարող են հետագայում ավելի շատ տարածվել և օգտագործվել[30]:

30. Այդպիսի օրինակ է 2014 թվականին Լրագրողների միջազգային դաշնության մշակած ուղենիշները՝ կանանց նկատմամբ բռնության լուսաբանման համար՝ www.ifj.org/fileadmin/images/Gender/Gender_documents/IFJ_Guidelines_for_Reporting_on_Violence_Against_Women_EN.pdf:

Համագործակցություն կառավարությունների, մասնավոր հատվածի և լրատվամիջոցների միջև՝ կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման միջոցների խթանման նպատակով

Կառավարությունների ստանձնած մոտեցումը կանանց նկատմամբ բռնությանը ընտանեկան բռնության հետ կապված շատ կարևոր է, քանի որ այն ազդեցություն է ունենում թե՛ լրատվամիջոցների կողմից այս խնդիրներին լուսաբանման ձևի և թե՛ այն ոլորտում մասնավոր հատվածի ընդհանուր ներգրավվածության վրա: Իրենց թողարկած ռեսուրսների միջոցով կառավարությունը կարող է խրախուսել կամ ապախրախուսել բռնության ակտիվ կանխարգելումը մասնավոր հատվածում և լրատվամիջոցներում: Ուստի կառավարությունները հնարավորություն ունեն խթանել սոցիալական փոփոխություններ՝ կապված հասարակությունում կանանց նկատմամբ բռնության ընկալման ձևի հետ՝ համագործակցելով լրատվական կազմակերպությունների հետ գենդերային հիմքով բռնության խնդրի շուրջ: Օրինակ՝ Միացյալ Թագավորությունում Ներքին գործերի նախարարությունը մեկնարկել է «Սաբռնություն է» խորագրով հեռուստատեսային արշավ, որի նպատակն է օգնել զոհահասներին ճանաչել բռնի հարաբերությունները[31]:

Բացի այդ, կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ քաղաքականության և տեղեկատվության նպատակով

31. Տե՛ս http://thisisabuse.direct.gov.uk/:

կառավարության կողմից օգտագործվող ձևակերպումները ներգործում են հասարակության մեջ բռնության և կանանց ընկալման ձևի վրա, քանի որ այդ ձևակերպումները կարող են արտացոլվել լրատվամիջոցներում: Օրինակ՝ այն մշակույթում, որը մարդկանց պատկերում է հասարակության մեջ իրենց դերով և դիրքով, այլ ոչ՝ նրանց անձնական բնութագրերով, կանայք հաճախ ներկայացվում են ընտանիքի համատեքստում՝ իրավունքներ և պարտականություններ ունեցող անհատների փոխարեն:

Գենդերային հավասարության և կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ հարցերի շուրջ լրատվական ոլորտի մասնագետների վերապատրաստման խթանում

Լրագրողների ուսուցանման միջոցով կառավարությունները կարող են աջակցել լրատվամիջոցներում կանանց և տղամարդկանց մասին ոչ սեքսիստական և ոչ խտրական ձևակերպումների օգտագործմանը և նվազ կարծրատիպացված պատկերմանը: Շվեդիայում դա արվել է «Sveriges Television (SVT)» հանրային հեռարձակող ընկերությունում գենդերային հարցերի շուրջ լրագրողների վերապատրաստման միջոցով: Պորտուգալիայում պորտուգալական հանրային հեռուստատեսային ընկերությունը (RTP)՝ Աշխատանքի և զբաղվածության ոլորտում հավասարության հարցերով հանձնաժողովի հետ համատեղ վերապատրաստել է իր աշխատակազմին գենդերային հավասարության, ոչ սեքսիստական ձևակերպումների օգտագործման, գենդերային հիմքով բռնության, կանանց սեռական օրգանների խեղման, որպես գենդերային հիմքով բռնության ձև ընտանեկան բռնության վերաբերյալ լրատվության և ինտիմ հարաբերությունների համատեքստում սպանությունների լուսաբանման շուրջ:

Նմանապես կառավարությունները կարող են առաջարկել այս թեմաների ներառումը որպես լրագրողների ուսուցման բաղադրիչ մաս՝ դպրոցներում մասնագիտացված միջամտությունների կամ կանանց նկատմամբ բռնության ոլորտում աշխատող մասնագետների (ՀԿ-ներ, իրավական ոլորտի մասնագետներ) և լրատվական հատվածում կրթական մասնագետների միջև կապեր ստեղծելու միջոցով:

Լրատվամիջոցներիինքնակարգավորմաննիխտրականուբռնի բռվանդակության կարգավորման խթանում

Սեքսիստական և վնասակար բովանդակությունից և սեռական բնույթի ու բռնի պատկերներ օգտագործող գովազդներից զերծ մնալու համար լրատվամիջոցներին կարելի է խրախուսել կիրառել ինքնակարգավորման չափանիշներ: Բազմաթիվ երկրներում՝ գոյություն ունեն անկախ, ինքնակարգավորման մարմիններ՝ վերահսկելու լրատվամիջոցների կողմից մի շարք փոխհամաձայնեցված չափանիշներին համապատասխանության ապահովումը, որոնք, որպես կանոն, ներառում են կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության մասին հաղորդումներում խտրականության բացառումը, գենդերային հավասարության խթանումը և գենդերազգայուն լուսաբանումը: Մի շարք եվրոպական երկրներում էլ առկա է սեքսիստական և բռնի բովանդակության հետ կապված կարգավորում օրենսդրության և կարգավորման մարմինների միջոցով, ինչպես նաև համակարգավորում, որի համաձայն՝ լրատվամիջոցների հատվածը համագործակցում է կառավարության հետ՝ մեդիա բովանդակության վերաբերյալ կանոններ սահմանելու նպատակով:

Այս առումով գործընկերության օրինակ է՝ Հավասար հնարավորությունների համար պատասխանատու՝ Իտալիայի Աշխատանքի և սոցիալական քաղաքականության նախարարության և Գովազդի ինքնակարգավորման իտալական ինստիտուտի միջև 2013 թվականի համագործակցությունը, որի նպատակն է ապահովել, որ առևտրային հաղորդակցության մեջ «չօգտագործվեն կանանց նկատմամբ բռնության կամ կանանց նկատմամբ բռնություն հրահրող պատկերներ»[32]:

Կիպրոսում Ռադիոյի և հեռուստատեսության մարմինը անկախ մարմին է, որը, ի թիվս այլնի, Ռադիոյի և հեռուստատեսության 10/2000 կարգավորման հիման վրա պատասխանատու է մասնավոր ռադիոհեռուստատեսային ալիքներով հեռարձակվող բովանդակության կարգավորման համար՝ կապված այն հաղորդումների հետ, որոնք անդրադառնում են երեխաների, կանանց կամ տարեցների նկատմամբ բռության հարցերին[33]: Այս մարմինը

32. Եվրոպայի խորհուրդ (2014 թ.) «Լրատվամիջոցներում լավագույն փորձերի հավաքածու», էջ 21:
33. Նույն տեղում, էջ 14:

քննում է մեդիա բովանդակությունը իր սեփական նախաձեռնությամբ կամ հանրության բողոքների հիման վրա: Տվյալ մարմնի աշխատանքի գլխավոր առաջնահերթություններից է սեռի հիմքով ցանկացած տեսակի խտրականությունից զերծ մնալը, այդ թվում և ծրագրի պատրաստման ընթացքում:

Իսպանիան կանանց նկատմամբ բռնության պայքարի միջոցների ոլորտում առաջատար պետություններից էր: 2004 թվականին երկիրն ընդունել է օրենք գենդերային հիմքով բռնությունից համապարփակ պաշտպանության միջոցների վերաբերյալ: Օրենքը բազմառարկայական մոտեցում է ցուցաբերում բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի խնդրին՝ մասնավորապես սևեռվելով կրթության, բռնության գովազդման և լրատվական լուսաբանման վրա, ինչպես նաև պահանջելով արժանապատվության և հավասարության նկատմամբ հարգանք այս համատեքստում: Գենդերային հիմքով բռնության վերաբերյալ Իսպանիայի 2004 թվականի օրենսդրությամբ ապօրինի է հայտարարվում ցանկացած գովազդ, որում կանանց պատկերներն օգտագործվում են նվաստացուցիչ կամ խտրական ձևով (հոդված 10): Այդ օրենքի 14-րդ հոդվածով կարգավորվում է նաև լրատվամիջոցների վերաբերմունքը կանանց նկատմամբ բռնության հանդեպ[34]:

Գենդերային հավասարության վերաբերյալ Ֆրանսիայի 2014 թվականի օրենքով[35] սահմանվում է Տեսալսողական ազգային խորհրդի դերը՝ ամբողջ տեսալսողական հաղորդակցության մեջ կանանց իրավունքների նկատմամբ հարգանքի հետ կապված: Տեսալսողական ազգային խորհուրդը երաշխավորում է, որ կանայք և տղամարդիկ արդարացիորեն ներկայացված են տեսալսողական հաղորդակցության բոլոր ծառայություններում, և հատուկ ուշադրություն է դարձնում, թե ինչպես են կանայք պատկերվում ծրագրերում՝ մասնավորապես նպատակ ունենալով պայքարել կարծրատիպերի, սեքսիստական կանխակալությունների, նվաստացուցիչ պատկերների և կանանց նկատմամբ բռնության դեմ[36]:

---

34. Լրացուցիչ տեղեկությունների համար (իսպաներեն լեզվով) տե՛ս՝ http://noticias.juridicas.com/base_datos/Admin/ lo1-2004.t1.html#c2:
35. Loi du 4 août 2014 sur l'égalité réelle entre les femmes et les hommes (France)՝ www.gouvernement.fr/action/la-loi-pour-l-egalite-reelle-entre-les-femmes-et-les-hommes:
36. Գենդերային հավասարության և լրատվամիջոցների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2013)1 հանձնարարականի կատարման մասին ձեռնարկ:

Կարևոր է ոչ միայն վնասակար բովանդակության և սեքսիստական գովազդի դեմ չափանիշների ընդունումն ու որդեգրումը, այլև բողոքարկման մեխանիզմների ստեղծումն ու օգտագործումը: 2013 թվականի դեկտեմբերին Եվրոպայում կայացվեց սեքսիստական միջսահմանային գովազդի վերաբերյալ առաջին վճիռը՝ ընդդեմ «Ryanair-ի աղջիկները» օրացույցի, որը 2007 թվականից ի վեր թողարկվում էր Ryanair-ի կողմից: 2012 թվականի դեկտեմբերին օրացույցի ամենամյա տպագրությունից հետո Իսպանիայի սպառողների շահերի պաշտպանության Alianza para la Defensa de Consumidores y Usuarios Activos (Adecua) ընկերակցությունը դատական հայց ներկայացրեց արշավի դեմ: Նրանց միացան Գլխավոր դատախազությունը, Կանանց ինստիտուտը, Կանանց իմիջի օբսերվատորիան և ֆեմինիստների իրավունքների պաշտպանության «Federación de Mujeres Progresistas» կազմակերպությունը: Մալագայի Երկրորդ առևտրային դատարանը վճռեց, որ առցանց արշավը (որում օրացույցը գովազդվում էր բարեգործական դրամահավաքի նպատակով) և օրացույցի օգտագործումն ավիառուղիների գովազդի նպատակով ապօրինի են, քանի որ թռիչքը սպասարկող կին ուղեկցորդները պատկերված էին «սեքսուալ դիրքերում» և «կնոջ մարմինն օգտագործվել էր որպես գովազդի նկատմամբ ուշադրություն գրավելու սովորական առարկա»: Ավիաընկերությանը հրահանգվեց դադարեցնել արշավը և ապագայում չկրկնել այն[37]:

Գենդերային հավասարության և կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ լրատվության ընդլայնմանն ուղղված գործընկերություններ

Կառավարությունները կարող են նաև փորձել ակտիվ կերպով բարձրացնել գենդերային՝ հիմքով բռնության վերաբերյալ իրազեկության մակարդակը՝ ընդլայնելով խնդրի շուրջ լուսաբանման ծավալը ազգային հանրային ծառայության լրատվամիջոցներում: ՄԹ-ում Բրիտանական հեռարձակման կորպորացիան (BBC) հանդես է եկել գենդերային հավասարությունն էկրանին և էկրանից դուրս վերահսկելու նախաձեռնությամբ որի նպատակն է հեռարձակման ոլորտում հասնել տարբեր տարիքի կանանց և տղամարդկանց ներկայացվածության արդարացի հավասարակշռության: Բելգիայում

37. «Ryanair-ի գործը»՝ www2.womenslinkworldwide.org/wlw/sitio/caso-interna.php?idcaso=387&idi=en:

նույնպես Ֆլամանդական ռադիոյի և հեռուստատեսության ցանցը ներդրել է բազմազանության քաղաքականություն՝ նպատակ ունենալով ծրագրեր մշակողների ուշադրությունը հրավիրել բազմազանությանը: Իտալիայում Սեռական և գենդերային հիմքով բռնության դեմ պայքարի Արտակարգ գործողությունների ծրագիրն ուղղված է, մասնավորապես, լրատվական օպերատորների իրազեկության բարձրացմանը՝ տեղեկատվության և (առևտրային) հաղորդակցության ոլորտում ապահովելու գենդերային ներկայացվածության և, հատկապես, կանանց կերպարի նկատմամբ հարգանքը:

Համագործակցության խթանում մեդիագրագիտության ոլորտում

Կառավարության առաջնորդությունը և գործընկերությունը լրատվամիջոցների և մասնավոր հատվածների հետ կարևոր է նաև միջոցների խթանման համար, որոնք օգնում են երեխաներին, ծնողներին և ուսուցանողներին պայքարել լրատվամիջոցներում սեռական և բռնի բնույթի նվաստացուցիչ բովանդակության դեմ: Կանանց առարկայացման նպատակով պատկերների գերսեքսուալացումը և սոցիալական մեդիայի կիրառումը ստեղծում են նոր համատեքստ, որտեղ կանայք և տղամարդիկ, և հատկապես երիտասարդները կառուցում և արտահայտում են իրենց ինքնությունը: Համալսարաններում և դպրոցներում արձանագրվում է բուլինգի, գերսեքսուալացման և սեքսիզմի աճ, որոնք սրընթաց տարածվում են նոր լրատվամիջոցների և սոցիալական մեդիայի միջոցով[38]: Այդ պատճառով Ստամբուլյան կոնվենցիայի 17-րդ հոդվածով մասնակից պետություններին խրախուսվում է համագործակցել ՏՀՏ հատվածի հետ՝ բարձրացնելու առկա վտանգների շուրջ իրազեկությունը և օգնելու երեխաներին ու նրանց ծնողներին հաղթահարել նոր տեխնոլոգիաների օգտագործման հետ կապված պոտենցիալ վնասը:

Նպատակը սոցիալական մեդիայի վերաբերյալ իրազեկությունը և մեդիագրագիտությունը բարձրացնելն է՝ զարգացնելով և խթանելով երեխաների, ծնողների և ուսուցանողների հմտությունները, կապված նրա հետ, թե ինչպես վարվել սոցիալական մեդիայում հանդիպող վնասակար տեղեկատվության և բռնի վարքագծի դեպքում: Դա պետք է արվի երիտասարդների առցանց իրավունքները և հնարավորություններն ընդլայնելու նպատակով՝ զարգացնելով

38. Եվրոպայի խորհուրդ (2013 թ.), «Լրատվամիջոցները և կանանց կերպարը», էջ 9:

նրանց գիտակցաբար, ինքնուրույն և անվտանգ կողմնորոշվելու կարողությունը տեղեկատվական հասարակությունում (Richardson J. 2010, p. 292)։ Երիտասարդների առցանց անվտանգությունն առաջին հերթին կախված է ինտերնետից օգտվելու գրագիտությունից և իրենց անձնական ու գաղտնի տվյալները պաշտպանելու անհրաժեշտության մասին իրազեկությունից, այլ ոչ թե անվտանգության և զգուշության մասին ուղերձներից[39]։ Անհրաժեշտ է ընդգծել կանխարգելման ոլորտում ներդրումների առավելությունները, քանի որ տեխնոլոգիաների ոլորտում թրծված և հմուտ երեխաները մեծանում են և դառնում ժամանակակից հաղորդակցության նվազ խոցելի օգտատերեր։

Եվրոպայի խորհրդի շատ անդամ պետություններ տարբեր միջոցներ են ձեռնարկել՝ ինտերնետից օգտվելու, էլեկտրոնային հաղորդակցման և սոցիալական մեդիայից օգտվելու ժամանակ երեխաների անվտանգությունն ապահովելու նպատակով։ Այդ միջոցառումները ներառում են՝ ծնողների և երեխաների համար վարքի կանոնագրքերի ստեղծում Ալբանիայում[40], տեղեկատվական տարբեր վեբկայքերի մշակում և պահպանում մասնավոր հատվածի գործընկերների հետ համագործակցությամբ՝ երեխաներին և ծնողներին ինտերնետի և էլեկտրոնային հաղորդակցման ապահով օգտագործման մասին տեղեկատվություն տրամադրելու նպատակով, օրինակ՝ Իտալիայում[41], կամ ծնողներին ծրագրային ապահովման զտիչ տարբերակների տրամադրում, օրինակ՝ Թուրքիայում[42]։

---

39. Եվրոպայի խորհուրդ (2009 թ.), «Ինտերնետ գրագիտության ձեռնարկ»։
40. Էլեկտրոնային հաղորդակցման ապահով և պատասխանատու օգտագործման վերաբերյալ վարքի կանոնագիրք ծնողների և երեխաների համար։ Վարքի կանոնագրքին (ալբաներենով) կարելի է ծանոթանալ այստեղ՝ http://plus.al/download/Kodi-i-sjelljes-07-02-2013.pdf։
41. Vita de social (իտալերենով) հարթակը (www.commissariatodips.it/vita-da-social.html) մշակվել է ընկերությունների կողմից՝ տեղեկացնելու ինտերնետ օգտատերերին ծրագրային ապահովման համակարգերի պաշտպանության, վերահսկման և բողոքների ներկայացման մեխանիզմների վերաբերյալ։ Հարթակը մշակվել է և պահպանվել Կրթության նախարարության, Facebook-ի, Fastweb-ի, Google-ի, 3(H3G)-ի, Libero-ի, Microsoft-ի, Poste Italiane-ի, Telecom-ի, Symantec-ի, Skuola.net-ի, Vodafone-ի, Virgilio.it-ի, Wind-ի, Youtube-ի և Gruppo Eventi-ի հետ գործընկերությամբ։ Հարթակի ստեղծումից բացի, կազմակերպվել են նաև իրազեկման միջոցառումներ, ինչպես օրինակ՝ տարրական և միջնակարգ դպրոցների մերձակայքում տեղադրվող տեղեկատվական բեռնատարի նախաձեռնությունը՝ աշակերտների, ծնողների և ուսուցիչների շրջանում բանավեճերի անցկացման և իրազեկության բարձրացման նպատակով։ Այդ բանավեճերը սկսվում են սոցցանցերի պատասխանատու օգտագործմանը։ Տե՛ս՝ www.facebook.com/unavitadasocial։
42. Տե՛ս օրինակ՝ www.guvenlinet.org/gb/։

Ոսկե կանոններ՝ «Անվտանգ մոտեցում թվային մեդիային» (Շվեյցարիա)[43]

Միջամտություն՝ Շվեյցարիայում «Երիտասարդությունը և մեդիան» մեդիա հմտությունների խթանման ազգային ծրագրի (2011-2015 թթ.) շրջանակներում մշակվել է համապարփակ վեբկայք[44], որտեղ ծնողները, ուսուցիչները և այլոք կարող են խորհրդատվություն գտնել այն մասին, թե ինչպես կարելի է մեղմել մեդիա ոլորտում առկա վտանգները, և օգնել 0-ից 13 տարեկան երեխաներին[45] անվտանգ օգտվել էլեկտրոնային լրատվամիջոցներից: Վեբկայքում մատչելի է հարուստ տեղեկատվություն՝ ներկայացումներ և անիմացիոն ֆիլմեր ընտանեկան դիտման համար, ինչպես նաև բրոշյուրներ և խորհուրդներ:

Մեդիայի անվտանգ օգտագործման 10 ոսկե կանոնները՝

1) Ավելի լավ է աջակցել, քան արգելել: Թվային աշխարհ մուտք գործելիս երեխաներին անհրաժեշտ է ծնողների աջակցությունը: Խոսեք ձեր երեխաների հետ թվային մեդիայի հետ նրանց ունեցած փորձի մասին:

2) Երեխաներին անհրաժեշտ են մեդիա ոլորտում իրազեկ մոդելներ ընդօրինակման համար: Երբ խոսքը թվային մեդիայի օգտագործման մասին է, ծնողները կամ խնամակալները երեխաների և դեռահասների համար դառնում են ընդօրինակման մոդելներ: Ուստի օգտակար է մտորել սեփական մեդիա սովորությունների շուրջ:

3) 3-6-9-12-ի կանոնը՝ չկա էկրան մինչև 3 տարեկան, չկա խաղային վահանակ մինչև 6 տարեկան, չկա ինտերնետ մինչև 9 տարեկան և չկա չվերահսկվող ինտերնետ մինչև 12 տարեկան:

4) Հետևեք տարիքային սահմանափակումներին ինչպես ֆիլմերի (jugendundmedien.ch), այնպեսև համակարգչային խաղերի դեպքում (pegi.ch):

---

43. Շվեյցարիայի սոցիալական ապահովագրության դաշնային վարչություն՝ «Անվտանգ մոտեցում թվային մեդիային»՝ www.jugendundmedien.ch/fileadmin/user_upload/Chancen_und_Gefahren/Flyer_gold-ene_Regeln_13_Sprachen/engl_goldene_Regeln_JuM.pdf:
44. www.jeunesetmedias.ch/fr/programme-national.html:
45. Մի շարք կանոններ կիրառելի են նաև դեռահասների համար:

5) Համատեղ որոշում կայացրեք էկրանի առջև լինելու ժամանակի վերաբերյալ: Երեխաների հետ միասին որոշումներ կայացրեք, թե օրական կամ շաբաթական որքան ժամանակ կարող են նրանք անցկացնել էկրանի առջև: Սահմանեք հստակ սահմանափակումներ և համոզվեք, որ երեխաները հետևում են ձեր համատեղ որոշումներին:

6) Էկրանները դայակներ չեն: Հոգ տարեք, որ ձեր երեխայի ժամանցը կապված չլինի թվային մեդիայի հետ:

7) Հեռուստացույցները, համակարգիչները և խաղային վահանակները չպետք է լինեն մանկական սենյակներում: Տեղադրեք դրանք ընդհանուր սենյակում: Հետևեք սմարթֆոններին և պլանշետներին:

8) Ստուգեք, թե ում հետ է առցանց շփվում ձեր երեխան: Երեխաները պետք է առցանց ծանոթություններ ստեղծեն միայն հանրային վայրերում և իրենց ծնողների ներկայությամբ:

9) Զգուշացրեք ձեր երեխային չմուտքագրել անձնական տվյալներ ինտերնետում: Ասեք ձեր երեխային, որ նա չի կարող մուտքագրել որևէ անձնական տվյալ՝ անուն, հասցե, տարիք և հեռախոսահամար, եթե ձեզ հետ դա չի քննարկել:

10) Բաց քննարկումներն ավելի լավ են, քան զտիչ ծրագրակազմերը: Քննարկեք ձեր երեխայի հետ նրա տարիքին համապատասխան բառապաշարով այնպիսի թեմաներ, ինչպիսիք են սեքսուալությունը և բռնությունը: Զտիչ ծրագրակազմի օգտագործումը խելամիտ է, սակայն չի երաշխավորում լիարժեք պաշտպանություն:

Ամփոփում

Մասնավորհատվածըևլրատվամիջոցներըկարևորդերենխաղումկանանց ևտղամարդկանցմեծմասի՝որպեսգործատուների,աշխատողների, ապրանքներ, ծառայություններ, մեդիա բովանդակություն և տեղեկատվականտեխնոլոգիաներարտադրողներիառօրյակյանքում:Մասնավոր հատվածումաշխատողևապրանքներուծառայություններսպառողկանանց տղամարդկանց շրջանում կարող են լինել զոհեր, բռնարարներ, վկաներ և կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերից տուժած այլ անձինք: Աշխատավայրըևլրատվամիջոցներըևսկարողենհանդիսանալտարածքներ, որտեղարմատավորվում,խրախուսվումկամ,ընդհակառակը՝ակտիվկերպով կանխարգելվումէկանանցնկատմամբբռնությունը՝կախվածտարբերշահակիր կողմերիվերաբերմունքիցևձեռնարկածգործողություններից:Ուստիկանանց նկատմամբբռնությանևընտանեկանբռնությանկանխարգելմանդրադեմ պայքարիբազմաոլորտայինմոտեցումըպետքէներգրավիմասնավորհատվածը, ներառյալ տեղեկատվականտեխնոլոգիաներիհատվածըևլրատվամիջոցները:

Ստամբուլյան կոնվենցիան նոր գործիք է մասնակից պետությունների համար՝ խրախուսելու մասնավոր հատվածին, տեղեկատվական տեխնոլոգիաների հատվածին և լրատվամիջոցներին օգտագործել իրենց ներուժը և մասնակցել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման գործին: Մասնավոր հատվածի ներգրավման համար կան բազմաթիվ ծանրակշիռ պատճառներ, ինչպեսև հետևելու հրաշալի օրինակներ: Ընտանեկան բռնության, բռնաբարության, հետամտման և սեռական ոտնձգությունների վերաբերյալլրատվությունը,որը զերծ էգենդերային կարծրատիպերից և սենսացիոն ձևակերպումներից, կօգնի լույս սփռել քննարկվող իրական խնդրի վրա, այն է՝ կանանց և տղամարդկանց անհավասարությունը և դրանից բխող՝ իշխանության անհավասար դինամիկան մասնավոր և մասնագիտական հարաբերություններում:

Հիմնվելով գոյություն ունեցող օրինակների և փորձառության վրա և մտապահելով մասնավոր և հանրային դերակատարների դերը և պարտավորությունները, ինչպես նաև լրատվամիջոցների անկախության նկատմամբ պատշաճ հարգանքը՝ հնարավոր է մշակել արդյունավետ սխեմաներ և խթաններ՝ խրախուսելու մասնավոր հատվածին իր ներդրումը կատարել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման գործում:

Ստուգացանկ

17-րդ հոդվածով մասնակից պետություններից պահանջվում է խրախուսել մասնավոր ընկերությունների և լրատվամիջոցների ավելի լայն ներգրավումը կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի գործում: Այդ նպատակին հասնելու համապարփակ ռազմավարությունների մշակման և իրականացման համար կարող է օգտակար լինել հետևյալ ստուգացանկը՝

- Արդյո՞ք ռազմավարություններ և միջոցներ են ներդրվել և իրականացվել՝ խրախուսելու մասնավոր հատվածին և լրատվական կազմակերպություններին ակտիվ դեր ստանձնել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման գործում:
  - Արդյոք խրախուսվե՞լ է մասնավոր հատվածին և լրատվամիջոցներին ներգրավվել կանանց նկատմամբ բռնության կանխարգելման գործում իրենց ապրանքանիշի, էթիկական չափանիշների կամ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հետ շրջանակներում:
  - Արդյոք կա՞ն բռնության կանխարգելման ոլորտում մասնավոր շահակիրներին ներգրավելու քաղաքական և առաջնորդական նախաձեռնություններ:
  - Արդյոք հաղորդակցման լեզուն հարմարեցվա՞ծ է կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի գործում մասնավոր հատվածի դերին «գործարար մոտեցում» ցուցաբերելու առումով:
  - Արդյոք մասնավոր հատվածին և լրատվամիջոցներին ուղղված խթանները հաշվի առնո՞ւմ են այդ շահակիր կողմերի հնարավոր տարբեր դերերը: Արդյոք դրանք ուղղվա՞ծ են բիզնես ընկերություններին՝ գործատուների, ապրանքներ և ծառայություններ արտադրողների, գովազդողների, վերաբերմունք ձևավորողների, ինչպես նաև ավելի լայն հասարակության անդամների իրենց դերում:
  - Արդյոք կառավարության քաղաքականությունը և հաղորդակցումը տրամադրո՞ւմ են ուղեցույց կամ գործիքներ՝

սեքսիստական և կարծրատիպային ձևակերպումներից խուսափելու համար։

- Արդյոք տրամադրվո՞ւմ է ֆինանսական աջակցություն՝ մասնավոր հատվածում և լրատվամիջոցներում բռնության կանխարգելման շուրջ ռազմավարությունների մշակման և իրազեկության բարձրացման նպատակով։
- Արդյոք կա՞ն հստակ քաղաքական շրջանակներ և բողոքարկման մեխանիզմներ՝ լրատվամիջոցներից սեքսիստական բնույթի և ֆսասակար բովանդակության հեռացումն ապահովելու համար։

❑ Արդյոք սահմանվե՞լ են խթաններ՝ խրախուսելու կանանց նկատմամբ բռնության կանխարգելման գործում մասնավոր հատվածի և լրատվամիջոցների մասնակցությունը։

- Արդյոք ներդրվե՞լ են խթաններ, ինչպես օրինակ՝ հարկային արտոնություններ, պարգևատրման սխեմաներ, բռնության բացառման համար մրցանակներ կամ գենդերային հավասարության պիտակներ՝ մասնավոր հատվածում և լրատվության/գովազդի ոլորտում բռնության կանխարգելումը խթանելու համար։
- Արդյոք կա՞ն բռնության կանխարգելման հետ կապված՝ գործատուների նախաձեռնությունների վերահսկման, մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներ։

❑ Արդյոք կա՞ն պետական միջոցներ՝ ուղղված մասնավոր հատվածում, ինչպես նաև լրատվական կազմակերպություններում կանանց նկատմամբ բռնության շուրջ իրազեկությունը բարձրացմանը։

- Արդյո՞ք կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեպքերի հաճախականության և դրա հետ կապված ծախսերի վերաբերյալ կառավարության տվյալները, ինչպեսև դրա կանխարգելման նպատակով կառավարության ռազմավարությունները մշակվում և տրամադրվում են հանրությանը և, մասնավորապես, տարածվում են մասնավոր հատվածի և լրատվամիջոցների շրջանակներում։
- Արդյո՞ք մշակվում և տրամադրվում են տեղեկություններ և ցուցանիշներ՝ կապված նրա հետ, թե ինչպես և որքանով է աշխատավայրում գենդերային հիմքով բռնությունը ներգործում աշխատակիցների վրա։
- Արդյո՞ք մշակվում և տրամադրվում են տեղեկություններ և ցուցանիշներ՝ կապված նրա հետ, թե ինչպես է գենդերային

հիմքով բռնությունը բացասաբար անդրադառնում բիզնեսի, արտադրողականության և տնտեսական աճի վրա՝ ուղղակի և անուղղակի ծախսերի ձևով։

- Արդյոք իրազեկության բարձրացումը ներառու՞մ է տեղեկություններ բռնության դեմ պայքարում ներգրավվելու դեպքում մասնավոր հատվածի համար տնտեսական և սոցիալական արտոնությունների վերաբերյալ։
- Արդյոք մասնավոր հատվածի և լրատվամիջոցների համար հեշտ հասանելի՞ են աշխատավայրում, տանը և հասարակության մեջ կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի լավագույն փորձի վերաբերյալ տեղեկություններ։
- Արդյոք կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը ներկայացվու՞մ են որպես աշխատավայրի անվտանգության խնդիր։

❑ Արդյոք ձեռնարկվո՞ւմ են միջոցներ՝ խրախուսելու գործատուներին ներմուծել աշխատավայրում կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և դրան արձագանքման քաղաքականություն։

- Արդյոք կանանց նկատմամբ բռնության և, հատկապես, աշխատավայրի հետ կապված բռնության վերաբերյալ թիրախային տեղեկատվական նյութերը տրամադրվո՞ւմ են գործատուներին։
- Արդյոք գործատուներին խրախուսվո՞ւմ է տեղեկություններ և աջակցություն տրամադրել աշխատակիցներին, որոնք տուժել են կանանց նկատմամբ բռնության այնպիսի ձևերից, ինչպես՝ սեռական ոտնձգությունը, հետամտումը կամ ընտանեկան բռնությունն է։
- Արդյոք գործատուներին խրախուսվո՞ւմ է աշխատավայրում ներմուծել սեռական ոտնձգությունների դեմ քաղաքականություն (հաշվի առնելով կիրառելի իրավական դաշտի դրույթները)։
- Արդյոք գործատուներին ներկայացվո՞ւմ են օրինակներ, թե ինչպես խորհրդատվություն տրամադրել սեռական ոտնձգությունների, հետամտման կամ ընտանեկան բռնության զոհերին՝ կադրերի բաժնի, պաստառների, ինտրանետի և այլ միջոցներով մասնագիտական օգնության ստանալու համար։
- Արդյոք գործատուներին ներկայացվո՞ւմ են օրինակներ, թե ինչպես բռնության զոհերի աջակցության ծառայություններն ինտեգրել աշխատակիցներին տրամադրվող նպաստների

համակարգում, օրինակ՝ որպես հոգեբանական, բժշկական, իրավաբանական կամ տնտեսական աջակցություն։

- Արդյո՞ք մասնավոր հատվածին և լրատվամիջոցներին խրախուսվում և տրամադրվում է կանանց նկատմամբ բռնության կանխարգելման վերաբերյալ ուսուցում։
  - Արդյոք գործատուներին տեղեկացնո՞ւմ են, որ բռնության խնդիրը, ինչպես աշխատավայրի ներսում, այնպես էլ աշխատավայրից դուրս, վերաբերում է մասնավոր հատվածին։
  - Արդյոք գործատուներին ապահովո՞ւմ են հմտություններով՝ խրախուսելու իրենց աշխատակիցներին քննարկել բռնության խնդրի մասին աշխատավայրում (դա կարող է արվել, օրինակ, ուսուցողական դասընթացների միջոցով, թե ինչպես զրուցել բռնության մասին և ինչպես ճանաչել աշխատավայրում բռնության նշանները կամ հասկանալ, որ գործընկերը տանը ենթարկվում է բռնության)։
  - Արդյոք ընդգծվո՞ւմ է բռնության կանխարգելման ոլորտում թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց ներգրավման կարևորությունը։
  - Արդյոք ուսուցողական դասընթացները նախատեսվա՞ծ են ոչ միայն գենդերային հիմքով բռնության զոհերի, այլև կազմակերպությունում հնարավոր բռնարարների համար։
- Արդյոք խրախուսվո՞ւմ է գործընկերությունների, ցանցերի և դաշինքների ստեղծումը մասնավոր հատվածի, հանրային հատվածի և լրատվամիջոցների միջև։
  - Արդյոք խրախուսվո՞ւմ է գործատուների միություններին և արհմիություններին ներգրավվել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման գործում։
  - Արդյոք խթանվե՞լ են կապեր և գործընկերություններ մասնավոր հատվածի և լրատվամիջոցների, ինչպես նաև պետական և ոչ պետական կազմակերպությունների միջև, որոնք զբաղվում են կանանց նկատմամբ բռնության հարցերով։
  - Արդյոք խրախուսվո՞ւմ է լավագույն փորձի, ինչպես նաև արդյունավետ մեթոդների, գործիքների և քաղաքականությունների փոխանակումը։
  - Արդյոք կազմակերպվե՞լ են կլոր սեղաններ կամ համաժողովներ այսօրինակ ցանցային համագործակցության խթանման համար։
  - Արդյոք մասնավոր դերակատարներին խրախուսվո՞ւմ է մասնակցել դրամահայթայթմանը և ֆինանսապես աջակցել

բռնության զոհերին ծառայությունների տրամադրմանը և կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի այլ նախաձեռնություններին:

- Արդյոք բիզնես ոլորտին խրախուսվո՞ւմ է մշակել արտադրանք և շուկայավարման ռազմավարություններ՝ բռնության կանխարգելմանը կամ իրազեկության բարձրացմանն ուղղակի կամ անուղղակի կերպով աջակցելու նպատակով:

- Արդյոք մասնավոր հատվածի և լրատվամիջոցների՝ որպես հասարակության մեջ վերաբերմունք ձևավորողների կարևորությունը շեշտադրվո՞ւմ է գենդերային բռնության դեմ պայքարի կառավարության ջանքերում:
  - Արդյոք մասնավոր հատվածին և լրատվամիջոցներին խրախուսվո՞ւմ է հաղթահարել կարծրատիպերը և գենդերային կուրությունը:
  - Արդյոք ընկերություններին խրախուսվո՞ւմ է հետևել կարգավորման կամ ինքնակարգավորման չափանիշների՝ լրատվամիջոցներում և գովազդներում սեքսիստական բնույթի բովանդակությունից զերծ մնալու համար:
  - Արդյոք մասնավոր հատվածի դերակատարները տեղեկացվա՞ծ են, որ ապրանքները և ծառայություններն ինքնին կարող են նպաստել բռնության արմատավորմանը և գենդերային դերերի պատկերման աղավաղմանն ու կանանց նկատմամբ բռնությանը:
  - Արդյոք կառավարական նախաձեռնություններով ապահովվո՞ւմ է մասնավոր հատվածի և լրատվամիջոցների ներգրավումը սպառողների շրջանում իրազեկության բարձրացմանն ուղղված քարոզարշավների և բողոքարկման մեխանիզմների միջոցով:

- Արդյոք բռնության դեմ պայքարին ուղղված կառավարական նախաձեռնություններով նպատակաուղղված խրախուսվո՞ւմ է լրատվական կազմակերպությունների մասնակցությունը:
  - Արդյոք կանանց նկատմամբ բռնության մասին հաղորդումներում խրախուսվո՞ւմ է համատեքստի մեջ դնել հանցագործությունները և վերլուծել գենդերային հիմքով բռնությունը՝ որպես հասարակական մակարդակում կառուցվածքային խնդիր:
  - Արդյոք լրատվամիջոցներին խրախուսվո՞ւմ է կանանց նկատմամբ բռնության պատկերման հետ կապված հետևել կարգավորման և ինքնակարգավորման չափանիշներին:

- Արդյոք միջոցներ ձեռնարկվո՞ւմ են անկախ լրատվական կարգավորման մարմինների ստեղծման և ամրապնդման ուղղությամբ։

- Արդյոք իրազեկման միջոցները և ուսուցողական դասընթացներն ուղղվա՞ծ են լրագրողներին և լրագրողների վերապատրաստման հաստատություններին և ընկերակցություններին՝ կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ ոչ սենսացիոն և ոչ կարծրատիպային հաղորդումներ խթանելու համար։

- Արդյոք լրագրության մեջ խրախուսվո՞ւմ է ոչ կարծրատիպային և ոչ սեքսիստական ձևակերպումների կիրառումը։

- Արդյոք խրախուսվո՞ւմ է ինքնակարգավորման միջոցով բռնի և սեռական բնույթի գովազդից զերծ մնալը։

- Արդյոք խրախուսվո՞ւմ է գենդերային հիմքով բռնության վերաբերյալ արդյունավետ լրատվական քարոզարշավների մշակումը՝ ի լրումս բռնության կանխարգելման շուրջ իրազեկության բարձրացման նպատակով լրատվամիջոցների օգտագործման։

- Արդյոք կառավարական նախաձեռնություններում ճանաչվո՞ւմ է սոցիալական մեդիայի պոտենցիալը՝ որպես գենդերային հիմքով բռնության դեմ մոբիլիզացիոն հարթակի։

- Արդյոք կառավարական նախաձեռնություններով խրախուսվո՞ւմ է լրատվական կազմակերպություններին համագործակցել պետական մարմինների հետ՝ (սոցիալական) մեդիայի ոլորտում իրազեկությունը և մեդիագրագիտությունը բարձրացնելու համար՝ զարգացնելու երեխաների, ծնողների և ուսուցանողների հմտությունները, կապված նրա հետ, թե ինչպես վարվել լրատվամիջոցներում սեռական կամ բռնի բնույթի նվաստացուցիչ բովանդակության հետ։

- Արդյոք տարբեր շահակիր կողմերին խրախուսվո՞ւմ է մասնակցել սոցցանցերում և ինտերնետում մնասակար տեղեկատվության և բռնի վարքագծի վերաբերյալ ուսումնասիրություններին և իրազեկության բարձրացման միջոցառումներին։

Հիմնական ռեսուրսներ

Միավորված ազգերի կազմակերպություն

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա: Ընդունվել է և բացվել ստորագրման, վավերացման և միացման համար Գլխավոր ասամբլեայի 1979 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 34/180 որոշմամբ, ուժի մեջ է մտել 1981 թվականի սեպտեմբերի 3-ին:

Կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ օրենսդրության ձեռնարկ (2009 թ.):

Կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ գործողությունների ազգային ծրագրերի ձեռնարկ (2012 թ.):

Եվրոպայի խորհրդի չափանիշներ և ռեսուրսներ

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (Ստամբուլյան կոնվենցիա, ԵՊՇ թիվ 210, 2011 թ.):

Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (Լանցարոտի կոնվենցիա, ԵՊՇ թիվ 201, 2007 թ.):

Եվրոպայի խորհուրդը Նախարարների կոմիտեի և Խորհրդարանական վեհաժողովի միջոցով հրապարակել է հետևյալ **հանձնարարականները** կանանց և տղամարդկանց միջև հավասարության, կանանց նկատմամբ բռնության վերացման և լրատվամիջոցներում գենդերային հավասարության վերաբերյալ՝

Տեղեկատվական և հաղորդակցման նոր միջավայրում երեխաներին իրավազորելու վերաբերյալ անդամ պետություններին Նախարարների կոմիտեի թիվ Rec (2006)12 հանձնարարական:

Բռնությունից կանանց պաշտպանության վերաբերյալ անդամ պետություններին Նախարարների կոմիտեի թիվ Rec (2002)5 հանձնարարական:

Լրատվամիջոցներում կանանց և տղամարդկանց միջև հավասարության վերաբերյալ անդամ պետություններին Նախարարների կոմիտեի թիվ R (84) 17 հանձնարարական:

Լրատվամիջոցներում սեքսիստական կարծրատիպերի դեմ պայքարի վերաբերյալ Խորհրդարանական վեհաժողովի թիվ 1751 (2010) բանաձև և թիվ 1931 (2010) հանձնարարական:

Անչափահասների համար համապատասխան ինտերնետային և առցանց մեդիա ծառայությունների խթանման վերաբերյալ Խորհրդարանական վեհաժողովի թիվ 1882 (2009) հանձնարարական:

Գովազդում կանանց պատկերման վերաբերյալ Խորհրդարանական վեհաժողովի թիվ 1799 (2007) հանձնարարական:

Լրատվամիջոցներում կանանց պատկերման վերաբերյալ Խորհրդարանական վեհաժողովի թիվ 1555 (2002) հանձնարարական:

Ստամբուլյան կոնվենցիայի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի տեղեկատվական թերթիկ:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության հետ կապված ծախսերի վերաբերյալ հետազոտությունների ակնարկ (2012 թ.):

Եվրոպայի խորհուրդ, Ինտերնետ գրագիտության ձեռնարկ (2009 թ.):

Այլ միջազգային իրավական պարտավորություններ և հանձնարարականներ

Զբաղվածություն

Գոյություն ունեն գենդերային հավասարության, ինչպես նաև աշխատանքային զբաղվածության հետ կապված առողջության և անվտանգության վերաբերյալ մի շարք միջազգային իրավական պարտավորություններ և հանձնարարականներ: Միջազգային այս փաստաթղթերը հատկապես ուղղված են աշխատավայրում աշխատակիցների բարեկեցությանը: Աշխատավայրում հավասարության խթանումը ներառում է բռնության կանխարգելում, ինչպես նաև բռնության ենթարկված կանանց և աղջիկների իրավունքների բարելավում և աջակցություն:

Եվրոպական միություն

Աշխատանքի և զբաղվածության հետ կապված հարցերում հավասար հնարավորությունների և տղամարդկանց ու կանանց նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքը կիրարկելու մասին Խորհրդի 76/73/ECC հրահանգի մեջ փոփոխություններ մտցնելու վերաբերյալ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2006 թվականի հուլիսի 5-ի 2006/54/EC հրահանգ:

Աշխատանքի միջազգային կազմակերպություն

Տեղական աշխատուժի համար արժանապատիվ աշխատանքի վերաբերյալ կոնվենցիա (թիվ 189 կոնվենցիա), 2011 թ.:

Անկախ երկրներում բնիկ ժողովուրդների և ցեղախմբերի վերաբերյալ կոնվենցիա (թիվ 169 կոնվենցիա), 1989 թ.:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և աշխատանքի ոլորտի վերաբերյալ հանձնարարական (թիվ 200 հանձնարարական), 2010 թ.:

Ծառայությունների ոլորտում աշխատավայրում բռնության վերաբերյալ և այդ երևույթի դեմ պայքարի միջոցների գործնական վարքականոններ, 2003 թ.:

Զբաղվածության ոլորտում տղամարդկանց և կանանց հավասար հնարավորությունների և նրանց նկատմամբ հավասար վերաբերմունքի վերաբերյալ բանաձև, 1985 թ.:

Կանանց միջազգային օր 2013 թ.՝ Դադարեցրեք բռնությունը աշխատավայրում: Տեղեկատվական հոդված:

ԱՄԿ-ի հայտարարությունը Կանանց կարգավիճակի հանձնաժողովի 57-րդ նստաշրջանին:

Աշխատանքի վայրում անվտանգության և առողջության պահպանման եվրոպական գործակալություն

Աշխատանքի վայրում բռնություն և ոտնձգություն՝ եվրոպական պատկեր (2010 թվականի զեկույց):

Ապրանքներ և ծառայություններ և տեսալսողական մեդիա

Եվրոպական միություն

Ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման և դրանց հասանելիության հարցում կանանց և տղամարդկանց նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքի կիրարկման մասին Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 13-ի 2004/113/EC հրահանգ։

Անդամ պետություններում հեռուստահեռարձակման գործունեության վերաբերյալ օրենքով, կանոնակարգերով կամ վարչական գործողություններով սահմանված որոշ դրույթների համակարգման մասին 89/552/EEC հրահանգի մեջ փոփոխություններ մտցնելու վերաբերյալ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2007/65/EC հրահանգ (11 դեկտեմբերի, 2007)։

Գրականություն

Bott S. *et al.* (2005), “Preventing and Responding to Gender-based Violence in Middle and Low-Income Countries: A Global Review and Analysis”, *Policy Research Working Paper 3618, World Bank Gender and Development Group,* Washington DC.

Capella M. L. *et al.* (2010), “The Impact of Violence against Women in Advertisements”, *Journal of Advertising*, Vol. 39, No. 4, pp. 37-51.

Coy M. and Kelly L. (2011), “Islands in the Stream. An Evaluation of Four London Independent Domestic Violence Advocacy Schemes”, Trust for London and Harry Smith Charity.

Dill K. E. *et al.* (2008), “Effects of exposure to sex-stereotyped video game characters on tolerance of sexual harassment”, *Journal of Experimental Social Psychology,* vol. 44, No. 5, pp. 1402-1408.

Eaves, Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա, Հավասարություն այժմ, ՕԲՅԵԿՏ (2012 թ.), *Միայն կանայք: 2012 թվականի սեպտեմբերին երկշաբաթյա ժամանակահատվածում բրիտանական ազգային տասնմեկ լրագրերի կողմից կանանց պատկերման գնահատում, ներառյալ՝ մամուլի կարգավորման բարեփոխման վերաբերյալ առաջարկությունները՝ կանանց վնասումը և նրանց նկատմամբ խտրականությունը նվազեցնելու նպատակով:*

Եվրոբարոմետր (2010 թ.), *Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության մասին զեկույց:*

Եվրոպական հանձնաժողով (2012 թ.), «Սեռի հետ կապված ոտնձգությունները և սեռական ոտնձգությունների մասին օրենքը եվրոպական 33 երկրներում, խտրականությունն ընդդեմ արժանապատվության», Ann Numhauser-Henning և Sylvaine Laulom, Գենդերային հավասարության ոլորտում իրավաբան փորձագետների եվրոպական ցանցի զեկույց:

Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտ (2014 թ.), «Եվրոպական միությունում գենդերային հիմքով բռնության հետ կապված ծախսերի գնահատում», Sylvia Walby-ի և Philippa Olive-ի պատրաստած զեկույցը, Եվրոպական միության հրապարակումների գրասենյակ, Լյուքսեմբուրգ:

Հիմնարար իրավունքների Եվրոպական միության գործակալություն (2014 թ.), «Կանանց նկատմամբ բռնություն՝ համաեվրոպական հետազոտություն»:

Fairbairn J. *et al.* (2013), *Sexual Violence and Social Media. Building a Framework for Prevention,* Crime Prevention Ottawa.

Farmer E. and Callan S. (2012), *Beyond violence – Breaking cycles of domestic violence*, The Centre for Social Justice, UK.

Fulu E. *et al.* (2013), *Why Do Some Men Use Violence against Women and How Can We Prevent It? Quantitative Findings from the United Nations Multi-Country Study on Men and Violence in Asia and in the Pacific.*

HAPI (2012), «Աշխատանքի պատրաստակամություն» հանուն առողջության հավասարության ապահովման. աշխատանքի, գործազրկության և սոցիալական պաշտպանության դերը առողջության անհավասարության ոլորտում:

Herrera C. and Exposito F. (2009), abstract from "Mass Media influence on the attribution of culpability and the justification of gender violence", University of Granada. Հոդվածը ներկայացվել է Դուբլինի (Իռլանդիա) Թրինիթի քոլեջի Քաղաքական հոգեբանության միջազգային հասարակության 32-րդ տարեկան գիտաժողովում:

Աշխատանքի միջազգային կազմակերպություն (2005 թ.) «Զեկույց աշխատավայրում սեռական ոտնձգությունների մասին, ազգային և միջազգային արձագանքներ», McCann D. (2005 թ.), էջ 27:

Johnson P.R. and Gardner S. (2000), "Domestic violence invades the workplace", in *Women in Management Review,* vol. 15(4), pp. 197-203.

Mama Cash (2011), *Untapped Potential, European Foundation Funding for Women and Girls.*

Marmot M. (2010), *Fair Society, Healthy Lives – The Marmot Review: Executive Summary.*

McKee M. *et al.* (2012), "Health systems, health and wealth: The argument for investment applies now more than ever", *Social Science and Medicine,* vol. 74, pp. 684-687.

Pattison G. (2006), "Tackling domestic violence – at work", *BBC News.*

Richardson J. (2010), "Awareness to Combat Online Sexual Violence" in *Protection Children from Sexual Violence – A Comprehensive Approach,*

Council of Europe Publishing Editions, pp. 289-299.

Seymour E. (2004), “Taboo?” Cited in the article *Soaps aid domestic abuse battle*.

Միավորված ազգերի կազմակերպություն (2006 թ.), Երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության հետազոտության մասին անկախ փորձագետի զեկույց. A/61/299:

Walby S. (2009), *The Cost of Domestic Violence: Up-date 2009*. Project of the UNESCO Chair in Gender Research, Lancaster University.

Walby S., Allen J. and Simmons J. (2004), *Domestic violence, sexual assault and stalking: Findings from the British Crime Survey,* London, Home Office Research, Development and Statistics Directorate.

Զրո հանդուրժողականություն (2012 թ.), *Մեկնաբանեք խնամքով. Ուղեցույց կանանց նկատմամբ բռնության համար պատասխանատու լրատվության համար:*

Մեջբերված վեբկայքեր՝

www.avonfoundation.org

www.apcwomen.org

www.caadv.org.uk/

http://everydaysexism.com/

http://feministfrequency.com/

www.ifj.org/fr/themes/egalite-des-sexes/

www.takebackthetech.net/

www.thebodyshop-usa.com

www.vodafone.com

Հոդված 17. Մասնավոր հատվածի և լրատվամիջոցների մասնակցությունը

1. Մասնակից պետությունները պետք է խրախուսեն մասնավոր հատվածին, տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտին և լրատվամիջոցներին, պատշաճ կերպով պահպանելով արտահայտվելու ազատությունն ու նրանց ինքնուրույնությունը, մասնակցել քաղաքականության մշակմանն ու իրականացմանը, ուղեցույցների և ինքնակարգավորման չափանիշների ընդունմանը՝ կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և նրանց արժանապատվության նկատմամբ հարգանքը բարձրացնելու նպատակով:

2. Մասնակից պետությունները, համագործակցելով մասնավոր հատվածի դերակատարների հետ, պետք է զարգացնեն և խթանեն երեխաների, ծնողների կամ ուսուցանողների համապատասխան հմտությունները՝ կապված նրա հետ, թե ինչպես վարվել տեղեկատվական և հաղորդակցման այնպիսի միջավայրի հետ, որը մատչելի է դարձնում սեռական կամ բռնի բնույթի նվաստացուցիչ նյութերը, որոնք կարող են վնասակար լինել:

PREMS 012120

HYE

Եվրոպայի խորհուրդը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում մայրցամաքի առաջատար կազմակերպություններից մեկն է: Այն բաղկացած է 47 անդամ պետություններից, որոնցից 28-ը Եվրոպական միության անդամ են: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները ստորագրել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, որը կոչված է պաշտպանելու մարդու իրավունքները, ժողովրդավարությունը և իրավունքի գերակայությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրականացումն անդամ պետություններում:

www.coe.int

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE